

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСКУССТВ**

МЕРИ КИРАКОСЯН

**НАУЧНЫЕ МЕРОПРИЯТИЯ,
ОРГАНИЗОВАННЫЕ ИНСТИТУТОМ
ИСКУССТВ НАН РА**

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2021**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ARTS**



**MERI KIRAKOSYAN
ACADEMIC EVENTS ORGANIZED BY NAS
RA INSTITUTE OF ARTS**

**YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2021**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021**

**ՀՏԴ 7
ԳՄԴ 85
Կ 530**

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

**Գիտական խմբագիր՝
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա ԱՍԱՏՐՅԱՆ**

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՄԵՐԻ

**Կ 530 ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական
միջոցառումները /Գիտ. խմբագիր՝ Ա.Գ.Ասատրյան.– Եր.: ՀՀ
ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021. 92 էջ:**

Ընթերցողին ներկայացվող աշխատության մեջ առաջին անգամ
ի մի է բերվում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գի-
տական նստաշրջանների պատմությունը: Հեղինակը կազմել է գիտա-
կան միջոցառումների մասին ակադեմիական ու պարբերական մա-
մուլում տպագրված արձագանքների գիտական լրատուն և գիտական
միջոցառումների նյութերի կամ հիմնադրույթների հրատարակված
ժողովածուների մատենագիտությունը՝ ժամանակագրական և այբբե-
նական կարգով:

Հասցեագրված է հայ արվեստի հարցերով հետաքրքրվողներին
և ընթերցող լայն շրջաններին:

**ISBN 978-5-8080-1457-2
© Կիրակոսյան Մ., 2021
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021**

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայկական ՍՍՌ-ի ԳԱ նախագահության որոշմամբ 1958 թ. մայիսի 1-ին Արվեստների պատմության և տեսության սեկտորի բազայի վրա ստեղծվեց Արվեստի ինստիտուտը¹...

Հայ արվեստագիտության ոլորտում բացառիկ են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դերը և նշանակությունը: Այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը միակ գիտական հաստատությունն է, որտեղ կատարվող հետազոտությունների առաջնային ուղղություններն են հայ արվեստի գրեթե բոլոր տեսակների՝ կերպարվեստի, ճարտարապետության, երաժշտության, դեկորատիվ և կիրառական արվեստների, թատրոնի, կինոյի և հեռուստատեսության պատմության և տեսության հիմնախնդիրները: Ինչպես իրավացիորեն նկատել է ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը. «Արվեստի ինստիտուտը գործել և գործում է առաջին հերթին իբրև հայ արվեստի զարգացման պատմության ուսումնասիրության կենտրոն, որը կոչված է մեկտեղելու այդ բնագավառում հանրապետության առաջատար գիտական ուժերը՝ մեր գեղարվեստական հարուստ, հսկայածավալ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրության, գիտական իմաստավորման և արժեքավորման, ինչպես նաև քարոզչական նպատակներով»²: Այդ առաքելության իրականացման գործում կարևոր նշանակություն են ունեցել ինստիտուտի կազմակերպած արվեստագիտական նստաշրջաններն ու կոնֆերանսները: Գիտաժողովների երթն ազդարարվեց գիտական արտագնա նստաշրջանների հրավիրմամբ: 1961-ին Ալավերդիում կազմակերպված գիտական սեսիայի ընթացքում լսվեցին զեկուցումներ սովետահայ երաժշտության, ճարտարապետության ու թատրոնի անցած ուղու և նվաճումների, կերպարվեստի ականավոր գործիչների մասին: Նստաշրջաններ հրավիրվեցին Ալավերդիում (1962), Կիրովականում (1965), Ղափանում (1967) և Նոյեմբերյանում (1967)³:

¹ Տե՛ս **Ասափրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 40:

² **Աղասյան Ա.**, Առաջաբան, **Ասափրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 6:

³ Տե՛ս **Ասափրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 64:

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄՆԵՐԸ

Արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումների շարքում իրենց կարևորությամբ առանձնանում են հայ արվեստին նվիրված միջազգային հինգ սիմպոզիումները, որոնց գիտական արդյունքները նշանակալի ավանդ դարձան հայ արվեստի ուսումնասիրության և միջազգային ճանաչման բնագավառում:

Միջազգային համագործակցության տեսանկյունից չափազանց կարևոր էր հայ-իտալական կապերի հաստատումը: Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գործակցության կարևորագույն արդյունքներից էր Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների կազմակերպումը:

1974-ին ձևավորվում է 10 հոգուց բաղկացած խորհրդային պատվիրակությունը՝ հետևյալ կազմով. ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտից՝ Ռուբեն Զարյան, Ալեքսանդր Սահինյան, Ստեփան Մնացականյան, Արմեն Զարյան, Մուրադ Հասրաթյան, Նոնա Ստեփանյան և Կորյուն Ղաֆադարյան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտից՝ Բաբկեն Առաքելյան, Մոսկվայից՝ Հովհաննես Ղալփախյան, Լենինգրադից՝ Տատյանա Իզմայլովա: ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ պատվիրակության ղեկավար է նշանակվում Ռուբեն Զարյանը⁴:

1975-ի հունիսի 28-30-ը Իտալիայի արտաքին գործերի նախարարության հովանավորությամբ Հյուսիսային Իտալիայի Բերգամո քաղաքում կայացավ Հայ արվեստին նվիրված միջազգային առաջին սիմպոզիումը, որը կազմակերպել էին Բերգամոյի համալսարանը, Միլանի պոլիտեխնիկումի հումանիտար գիտությունների ինստիտուտը, Թուրինի ճարտարապետության պատմության ինստիտուտը և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը⁵:

⁴ Տե՛ս **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 367:

⁵ Տե՛ս ATTI Del primo simposio internazionale di arte Armena (Bergamo, 28-30

Սիմպոզիումի թեման էր՝ հայ միջնադարյան արվեստը և ճարտարապետությունը (բրոնզե դարից մինչև ուշ միջնադար): Հրավիրված էին մասնակիցներ 14 երկրների՝ Խորհրդային Միության, Իտալիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Լիբանանի և այլ երկրների 120 գիտնականներ, որոնք տարբեր բաժանմունքներում կարդացին 60 զեկուցում:

Բերգամոյում սիմպոզիումին նախորդեց «Հայկական շաբաթ»-ը, որի ընթացքում ընթերցվեցին հայ ժողովրդի պատմության և արվեստի մասին բազմաթիվ զեկուցումներ:

Սիմպոզիումի օրերին Բերգամոյում բացվեց «4-18-րդ դարերի հայ ճարտարապետությունը» ցուցահանդեսը, որտեղ նաև տեղ էին գտել հայ արվեստին և ճարտարապետությանը նվիրված հրատարակությունները:

Ցուցահանդեսին խորհրդային պատվիրակության անունից բացման խոսք ասաց Բաբկեն Առաքելյանը: Գիտաժողովի բացումից առաջ տեղի ունեցավ հատուկ հարցազրույց, որտեղ հանդես եկան կազմակերպող կողմերի պաշտոնական ներկայացուցիչները, ինչպես նաև «Ունիտա» և այլ թերթերի թղթակիցներ: Իտալական մամուլը տպագրեց գիտաժողովի աշխատանքները լուսաբանող հոդվածներ: Բացման արարողությանը մասնակցում էին Իտալիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ ղոկտոր Չերկիոնին և Իտալիայում Սովետական Միության դեսպանության մշակութային գծով կցորդ Կաբանենկոն:

Բացման ելույթի իրավունքը տրված էր Ադրիանո Ալպագո Նովելլոյին (Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոն), Նինա Կաուչիշվիլուն (Բերգամոյի համալսարանի սլավոնագիտության ամբիոն) և Ռուբեն Զարյանին (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտ)⁶:

Ընթերցվեցին ՀՍՍՀ ԳԱ նախագահ, ակադեմիկոս Վիկտոր

Համբարձումյանի, Իտալիայի արտաքին գործերի նախարար Մա-րիանո Ռոմորիի և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ող-ջույնի խոսքերը:

Նույն օրվա երկրորդ կեսին մեկնարկեցին սիմպոզիումի բաժանմունքների աշխատանքները: Խորհրդային Միության պատ-վիրակության անդամները հանդես եկան զեկուցումներով, որոնք ընդգրկում էին Ուրարտուից մինչև ուշ միջնադար ընկած ժամա-նակաշրջանը և նվիրված էին ինչպես քաղաքաշինական հար-ցերին, այնպես էլ պատմական հուշարձանների առանձին տիպերի, համալիրների հետազոտությանը: Եռանավ և միանավ բազիլիկա-ներին էին նվիրված Ալեքսանդր Սահինյանի և Մուրադ Հասրաթ-յանի զեկուցումները: Թեմատիկ լայն ընդգրկում ունեին տարբեր երկրներից ժամանած գիտնականների զեկուցումները: Այսպես՝ Թոմազո Բրեչչիա Ֆրատոկկիի բանախոսությունը Վանա լճի Լիմ, Կտուց և Առտեր մենաստանների մասին:

Սիմպոզիումի նիստերում կարդացված զեկուցումների մի մա-սը նվիրված էր ճարտարապետության և արվեստի բնագավառում եղած կապերի և առնչությունների վերլուծությանը, հայ-իտալական մշակութային փոխառնչության խնդրին էր վերաբերում Ֆ.Բրանկիի «Հայերի առկայությունը Լոմբարդիայում» բանախոսությունը: Առանձին խումբ էին կազմում Հարավային Իտալիայի հայկական բնակավայրերում պահպանված հուշարձաններին վերաբերող, արվեստին և մասնավորապես կիրառական արվեստին առնչվող զեկուցումները: Ս.Մարիանի Կարլո՝ «Պուլեի շրջանը և կովկասյան մշակույթը», Ն.Տիերի՝ «Պաղեստինյան պատկերագրության վեր-ապրուկները Վասպուրականում» են⁷:

Հայ արվեստին նվիրված երկրորդ միջազգային սիմպոզիու-մի նախապատրաստման նպատակով 1977-ին ստեղծվում է նե-րինստիտուտային աշխատանքային կազմկոմիտե՝ հետևյալ կազ-մով՝ Մուրադ Հասրաթյան (նախագահ), Ստեփան Մնացականյան, Նոնա Ստեփանյան, Մանյա Ղազարյան, Կորյուն Ղաֆադարյան,

Giugno 1975). Istituto Universitario di Bergamo, Facolte di architettura del politecnico di Milano. Accademia delle scienze dell' Armenia RSS.- San Lazzaro-Venezia.-1085 p. ill.

⁶ **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, էջ 368:

⁷ **Մնացականյան Ս.**, Հայ արվեստի պատմությանը նվիրված գիտաժողով Իտալիայում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1975, 3 (70), էջ 253, 254:

Արմեն Զարյան, Լևոն Ազարյան, Լիլիթ Զաքարյան⁸:

Սիմպոզիումի կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծվեց նաև կազմկոմիտե՝ հետևյալ կազմով՝ Վիկտոր Համբար-ծումյան, Աբգար Հովհաննիսյան, Ռեմա Սվետլովա, Յակով Խաչիկյան, Գուրգեն Առաքելյան, Ռուբեն Պարսամյան, Սերգեյ Համբարծումյան, Մուրադ Մուրադյան, Եղիշե Համազասպյան, Ռաֆայել Սամսոնով: Կազմկոմիտեի նախագահ նշանակվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանը, տեղակալ՝ Ռուբեն Զարյանը, քարտուղար՝ Կորյուն Ղաֆադարյանը⁹:

1978 թվականի սեպտեմբերի 12-18-ը Երևանում գումարվեց Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումը, որն ուներ 5 մասնաճյուղ՝

1. Հին Հայաստանի մշակույթը և արվեստը,
2. Միջնադարյան հայ ճարտարապետություն,
3. Միջնադարյան հայ արվեստ,
4. Հայկական մանրանկարչություն,
5. Նոր և սովետական հայկական արվեստ¹⁰:

Սիմպոզիումի աշխատանքներին մասնակցում էր Խորհրդային Միության և աշխարհի շուրջ 20 երկրների 270 գիտնական. ներգրավված էին Խորհրդային Միության և արտասահմանյան երկր-

ների գիտահետազոտական հիմնարկները¹¹: Նիստերը գումարվեցին Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում, Մատենադարանում, Գրողների տանը, Ճարտարապետների տանը, Արվեստի աշխատողների տանը¹²:

Սիմպոզիումի կազմակերպման մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Ռուբեն Զարյանն իր «Մայրամուտից առաջ (Ինքնապատում)» գրքում¹³, որտեղ մասնավորապես ասվում է. «Գիտաժողովը ունենալու էր էմբլեմ. իտալացիները ընտրել էին Ավանի եկեղեցու հատակագիծը: Երևի ճիշտ կլիներ, եթե հենց դա էլ պահպանվեր: Չվարթնոցի խոյակներից մեկի արծվի պատկերն ունեցող էսքիզին, որը նկարիչ Խաչիկ Մուրադյանի գործն էր, կազմկոմիտեն հավանություն տվեց, իսկ հուշամեդալը պատրաստվեց Լենինգրադում»¹⁴:

Սիմպոզիումի շրջանակում նախատեսված էր կազմակերպել 2 ցուցահանդես: Արդյունքում իրականացավ միայն հայկական դրոշմանիշների նմուշների ցուցահանդեսը Ակադեմիայի նախագահության շենքի ճեմասրահում: Դրա ողջ պատասխանատվությունը ստանձնեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի գիտության բաժնի աշխատակից Եվգենի Սիմոնյանը¹⁵:

Սիմպոզիումի բացման խոսքում ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի առաջին տեղակալ, գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Ալեքսան Կիրակոսյանը նշեց. «Մեզ համար մեծ է այս գիտաժողովի ոչ միայն գիտական, պատմական, այլև մշակութա-

⁸ **Ասապրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 134, **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, էջ 373:

⁹ **Ասապրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 134, 135, **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, էջ 374:

¹⁰ Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 1-ին, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 302 էջ: Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 2-րդ, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 477 էջ: Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 3-րդ, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 424 էջ: Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 4-րդ, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 418 էջ:

¹¹ Կապիտալիստական երկրներից ժամանեց 50 մարդ, ԱՄՆ-ից՝ 11, Իտալիայից՝ 14, Անգլիայից՝ 4: Սոցիալիստական երկրներից ներկայացուցիչներ կային Լեհաստանից, Ռումինիայից, Հարավսլավիայից, Չեխոսլովակիայից, Հունգարիայից, Բուլղարիայից, Գերմանիայից: Բացի այդ՝ Սփյուռքահայության կոմիտեն հրավիրեց 23, Կաթողիկոսը՝ 4 մարդ: Հայաստանից մասնակիցների թիվը հասավ 65-ի, Ռուսաստանից մասնակցեցին 31 մարդ, Վրաստանից՝ 8, Ուկրաինայից՝ 6, Ադրբեջանից՝ 2, տե՛ս **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, էջ 379:

¹² Համաձայնագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ:

¹³ **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 544 էջ:

¹⁴ Նույն տեղում, էջ 380:

¹⁵ Նույն տեղում, էջ 383:

յին-հասարակական նշանակությունը: Այն վկայում է, որ, ի տարբերություն նախախորհրդային տարիների, այսօր Հայաստանն է հայագիտության կենտրոնը...»¹⁶:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի անունից սիմպոզիումի մասնակիցներին ողջունեց ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Նա մասնավորապես ընդգծեց. «Մեր հանրապետության գիտությունների ակադեմիան իր հիմնադրման առաջին իսկ օրվանից մեծ ուշադրություն է նվիրել հայագիտական հետազոտություններին, և Գիտությունների ակադեմիան հայ արվեստի ուսումնասիրության հարցերը համարում է հատուկ ուշադրության արժանի գործ»¹⁷:

Հայ արվեստի զարգացման պատմությունն ու առանձին հիմնախնդիրներ ընդգրկող զեկուցումներում գիտական շրջանառության մեջ դրվեցին նոր փաստեր, որոնց մեկնաբանությունները լույս սփռեցին հայ արվեստի պատմության մի շարք հարցերի վրա:

Սիմպոզիումը խթանեց ինչպես հայագիտական մտքի առաջընթացը, այնպես էլ նպաստեց տարբեր երկրների գիտնականների միջև համագործակցության հետագա ամրապնդմանը: Զեկուցումներն աչքի ընկան թեմաների բազմազանությամբ, զանազան խնդիրների յուրովի լուսաբանմամբ, հայկական միջնադարյան արվեստի նկատմամբ տարբեր երկրների գիտնականների հետաքրքրությամբ¹⁸:

Հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում հատկապես ուշադրության են արժանի ար-

տասահմանյան երկրների, հատկապես իտալացի գիտնականների զեկուցումները: Եվ պատահական չէր, որ տվյալ մասնաճյուղի բանախոսների զգալի մասն արտասահմանյան երկրների գիտնականներն էին. այսպես՝ Ֆ.Գանդոլֆոն (Իտալիա) հանդես եկավ «Հայ վաղ քրիստոնեական ճարտարապետության մեջ ստրուկտուրայի և ֆունկցիայի կապերի հարցի շուրջ» զեկուցմամբ, Ա.Ալպագո Նովելլոն (Իտալիա)՝ «Հայկական հուշարձանները Հյուսիսային Իրանի տարածքում», Ա.Տեր-Հարությունյանը (Մեծ Բրիտանիա)՝ «Ազգիտի հայկական ամրոցը», Մ.Հասրաթյանը (Հայաստան)՝ «Թբիլիսիի հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձանները» և այլն: Ի թիվս այլոց՝ հայ միջնադարյան մանրանկարչությանը նվիրված հետաքրքիր զեկուցումներ կարդացին ԱՄՆ-ից՝ Ա.Սաջյանը. «Կալիֆոռնիայի համալսարանի՝ XIV դարի Գլաժորի ավետարանի մասին», Լենինգրադից՝ Տ.Իզմայլովան. «XII դարի հայկական մանրանկարչությունը» և այլք:

Սիմպոզիումի մասնակիցների համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ դեպի հայկական ճարտարապետական հուշարձաններ՝ Էջմիածին, Զվարթնոց, Գառնի, Գեղարդ, Հաղպատ, Սանահին, Գոշավանք, Հաղարծին, Սարդարապատ, Օձուն և այլուր¹⁹: Սիմպոզիումի մասնակիցներն այցելեցին Հայաստանի պետական պատկերասրահ, Մատենադարան, Էրեբունի թանգարան, Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես, Ժամանակակից արվեստի թանգարան, ինչպես նաև ներկա գտնվեցին Հայաստանի պարի պետական անսամբլի և Հայաստանի պետական կապելլայի (Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճ) համերգներին²⁰:

Սիմպոզիումի աշխատանքների արդյունքներն ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը:

1981թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը Իտալիայում Միլանի Հայ արվեստի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի, Մխիթարյան միաբանության Սբ. Ղազար հայկական ակա-

¹⁶ *Սիմոնյան Հ.*, Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1978, 3 (82), էջ 291:

¹⁷ *Համբարձումյան Վ.*, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ (Ողջույնի խոսք), Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու: Հատոր 1-ին, Երևան, 12-18 սեպտեմբերի, 1978, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 44, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1978, 10 (430), էջ 118:

¹⁸ Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումի զեկուցումները տպագրվել են նաև առանձին բրոշյուրներով: Տե՛ս *Ասատրյան Ա.*, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50, էջ 370-392:

¹⁹ *Սիմոնյան Հ.*, Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիում, էջ 292:

²⁰ Համաձայնագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ:

դեմիայի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործակցությամբ գումարվեց երրորդ սիմպոզիումը²¹:

Սիմպոզիումի թեման ներառում էր հայկական միջնադարյան ճարտարապետության, մանրանկարչության, կիրառական արվեստի, ինչպես նաև հայ-իտալական մշակութային առնչություններին նվիրված հետազոտություններ: Կարևորվեց հրավիրել Ժ. Լաֆոն-տեն-Դոգոնին՝ Բելգիայից, Լարս Մյուլերին՝ Դանիայից և Մայքլ Սթոունին՝ Երուսաղեմից²²: Ձևավորվեց 19 հոգուց բաղկացած խորհրդային պատվիրակությունը, որը ղեկավարում էր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, Հայ արվեստի միջազգային երկրորդ գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Ալեքսան Կիրակոսյանը:

Սիմպոզիումի մեկնարկն ազդարարվեց խորհրդային պատվիրակության կողմից Միլանի հնագիտության թանգարանին խաչքարի նվիրաբերմամբ (Մարտունու շրջանի Կոթավանքի շրջակայքի՝ XII-XIII դարերի)²³:

Սիմպոզիումի հանդիսավոր բացումը և լիազումար նիստը տեղի ունեցան Վիչենցայի Օլիմպիա թատրոնում: Բացման խոսքով հանդես եկավ Ադրիանո Ալպագո Նովելլոն, այնուհետև սիմպոզիումի մասնակիցներին և հյուրերին ողջունեց քաղաքագլուխ Ջովանի Բիեզան, իսկ պատասխան խոսքով հանդես եկավ Ալեքսան Կիրակոսյանը: Ձեկուցումներով հանդես եկան Նինա Գարսոյանը (ԱՄՆ)՝ «Հայկական միջնադարյան արվեստի ուսումնասիրության մի քանի հարցեր» և Գրիգոր Հասրաթյանը «խորհրդային Հայաստանի հուշարձանների պահպանումը և վերականգնումը» թեմաներով²⁴:

Սեպտեմբերի 30-ին Ադրիանո Ալպագո Նովելլոյի նախաձեռնությամբ Պիացոլլա Սուլ Բրենտայի Կոնտարինի-Սիմես առանձնա-

տանը բացվեց «Խաչքարեր» ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին խաչքարերի ընդօրինակություններ²⁵:

Հոկտեմբերի 1-ին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի միջև կնքվեց համագործակցության վեցամյա համաձայնագիր²⁶: Կազմակերպվեց 20 ցուցահանդես, որոնցից էր «Հայ ճարտարապետությունը Դ դարից-ԺԸ դարերը», վերջինիս մասին եվրոպական ութ երկրներում ներկայացվեց 70 բանախոսություն:

Երկու կողմերը նախաձեռնեցին հետևյալ երեք շարքերի հրատարակությունը՝ «Հայ ճարտարապետության հուշարձանները», «Հայ ճարտարապետության հետազոտությունները», «Հայ ճարտարապետության հուշարձանների գծաքանդակները»²⁷: Սիմպոզիումի գիտական առաքելություններից էր Միլանի վերոնշյալ կենտրոնի աշխատակիցների գործուղումը խորհրդային Միություն, Թուրքիա, Իրան, Սիրիա՝ հայ արվեստի կոթողներն ուսումնասիրելու նպատակով, իսկ Արվեստի ինստիտուտի գիտաշխատողները մեկնում էին Իտալիա՝ գիտական հետազոտությունները համադրելու, հայ ճարտարապետական կոթողները հետազոտելու համար:

Իսկ արդեն 1985թ. սեպտեմբերի 11-17-ը Երևանում կայացավ չորրորդ սիմպոզիումը, որի աշխատանքներին մասնակցում էին արտասահմանյան (Ավստրիա, Բելգիա, Մեծ Բրիտանիա, Հունաստան, Դանիա, Իրան, Իռլանդիա, Իտալիա, ԱՄՆ, Ֆրանսիա) և խորհրդային շուրջ 160 գիտնականներ, արվեստաբաններ և հայագետներ²⁸:

Ամենամեծ պատվիրակությունն Իտալիայից էր՝ 14 ներկայացուցիչ, այնուհետև Ֆրանսիայից՝ 8, ԱՄՆ-ից՝ 6, նույնքան՝ Գերմանիայից: Սիմպոզիումի կազմակերպական աշխատանքները ղեկավարում էին ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ,

²¹ ATTI.Del terzo simposio internazionale di arte Armena. 1981 Milano /Vicenza/ Castelfranco V. /Plazzolo sul Brenta /Venezia. 25 settembre-1 ottobre.- San Lazzaro-Venezia.-659 p. ill

²² **Ջադյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, էջ 400:

²³ Նույն տեղում, էջ 404, 405:

²⁴ Նույն տեղում, էջ 408, 409:

²⁵ Նույն տեղում, էջ 412:

²⁶ Նույն տեղում, էջ 414:

²⁷ Տե՛ս Համաձայնագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ:

²⁸ Четвертый международный симпозиум по армянскому искусству (Тезисы докладов, Ереван, 11-17 сентября, 1985), Ереван, Изд-во АН Арм. ССР, 1985, 326 стр.

երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը և ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող Մուրադ Հասրաթյանը²⁹:

Սիմպոզիումի հուշամեդալի առնչությամբ Ռուբեն Զարյանը գրում է. «Մեր ճարտարապետներից երկուսը՝ Մուրադ Հասրաթյանը և Կորյուն Ղաֆադարյանը, այն կարծիքին էին, որ երկրորդ գիտաժողովի հուշամեդալը հնաոճ է, և առաջարկեցին, պահպանելով պատկերը, այն արդիականացնել: Գործը հանձնարարվեց նկարիչ Ռոմիկ Զուլիսկյանին, և երբ հուշամեդալը պատրաստ էր, ես հասկացա, որ ընկերները միանգամայն իրավացի էին»³⁰:

Ներկայացված բազմաբովանդակ զեկուցումներում ընդհանրացվեցին հայ արվեստի ուսումնասիրության բնագավառի վերջին տարիների կարևոր նվաճումները: Սիմպոզիումի բացմանը ներկա էր սիմպոզիումի կազմկոմիտեի նախագահ, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կարլեն Դալլաքյանը: Ներածական խոսքում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Յուրի Խոջամիրյանը նկատեց. «Տասը տարի առաջ Իտալիայի Բերգամո քաղաքում տեղի ունեցած հայ արվեստին նվիրված միջազգային առաջին գիտաժողովը հիմք դրեց մի ավանդույթի, որի նշանակությունը անգնահատելի է հայ ժողովրդի մշակույթի պատմության ուսումնասիրության բնագավառում: Լիաժույս եմ, որ չորրորդ գիտաժողովը էլ ավելի կամրապնդի տարբեր երկրների գիտնականների համագործակցությունը»³¹:

Սիմպոզիումի աշխատանքները ծավալվեցին 4 մասնաճյուղերում՝

1. Կիրառական արվեստ,
2. Միջնադարյան ճարտարապետություն,
3. Միջնադարյան արվեստ,
4. Նոր և խորհրդային շրջանի արվեստ և ճարտարապետություն:

²⁹ **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, էջ 419:

³⁰ Նույն տեղում, էջ 423, 424:

³¹ **Զաքարյան Ա.**, Հայ արվեստին նվիրված միջազգային չորրորդ գիտաժողովը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1985, 9 (513), էջ 94, 95:

Մասնաճյուղերում արծարծված հարցերի շրջանակում կարևորվեց խաչքարերի և գորգարվեստին նվիրված զեկուցումների ներգրավումը: Հայ և արտասահմանյան մասնագետների մասնակցության շնորհիվ ընթերցվեց գորգարվեստի վերաբերյալ յոթ և խաչքարերի վերաբերյալ չորս զեկուցում³²:

Լիագումար նիստի հետաքրքիր և բովանդակալից զեկուցումներից էին Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ներկայացուցիչ, արվեստի ականավոր պատմաբան, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Դմիտրի Սարաբյանովի «Գ.Յակովլովը և Արևելքի արվեստի ավանդները» և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր Ս.Մնացականյանի «Քառասյուն խաչագմբեթային համակարգերի ձևավորման ուղիները Հայաստանում և Բյուզանդիայում» բանախոսությունները³³:

Առանձին նիստերում սիմպոզիումի մասնակիցները ներկայացրին գիտական հաղորդումներ, բերեցին ուշագրավ փաստեր, որոնք լուսաբանում էին Հայաստանի հին մշակույթի, միջնադարյան ճարտարապետության, կիրառական արվեստների, մանրանկարչության և խորհրդային արվեստի բնագավառների նվաճումներին վերաբերող մի շարք հարցեր:

Սիմպոզիումի մասնակիցների համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ դեպի հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ՝ Աշտարակի Կարմրավոր եկեղեցի, Սաղմոսավանքի ճարտարապետական համալիր, Թալինի ճարտարապետական հուշարձան, Զվարթնոց, Նորավանքի ճարտարապետական համալիր, Թանադեվանքի՝ Գլաձորի համալսարանի համակառույց: Եղեգնաձորում նրանք մասնակցեցին միջնադարյան նշանավոր ճարտարապետ Մոմիկի անվան զբոսայգու ծառատունկին, իսկ Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պե-

³² **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում), հ. 4, էջ 421:

³³ **Мнацаканян С.** IV международный симпозиум по армянскому искусству, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1985, 3 (110), էջ 234, **Агосян А.** IV Международный симпозиум по искусству Армении, «Советское искусствознание-22», Москва, «Советский художник», 1987, стр 446-448.

տական ակադեմիական թատրոնում դիտեցին Ա.Խաչատրյանի «Գայանե» բալետի ներկայացումը:

Մեր հետազոտության արդյունքում հայտնաբերված արխիվային մի ուշագրավ նյութի շնորհիվ պարզեցինք, որ Հայ արվեստին նվիրված միջազգային չորրորդ սիմպոզիումի շրջանակում 1985թ. սեպտեմբերի 11-ին կազմակերպվել է համերգ, որի ընթացքում հնչել են հայ ու եվրոպացի կոմպոզիտորների գործեր՝ ժողովրդական երգեր, Խաչատուր Ավետիսյանի մանրանվագը, Անտոն Ռուբինշտեյնի «Ռոմանսը» և «Նեոպոլիտանական երգը», Սերգեյ Պրոկոֆևի «Սարկազմները», Կոմիտասի անվան քառյակի կատարմամբ՝ Կոմիտաս-Ս.Ասլամազյանի երկու մանրանվագը: Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի կամերային նվագախումբը ներկայացրել է Գ.Դոնիցետտիի «Լուչիա դի Լամերմուր» օպերայից Լուչիայի արիան, հատվածներ Ա.Վիվալդիի «Տարվա եղանակներ» կոնցերտից և Յ.Սիբելիուսի «Պրեյլուդը»³⁴:

Վերադառնալով սիմպոզիումի աշխատանքներին՝ նշենք, որ եզրափակիչ նիստում ուշագրավ և արժեքավոր զեկուցումներով հանդես եկան արվեստագիտության դոկտոր, Լենինգրադի պետական Էրմիտաժի գիտական աշխատակից Տ.Իզմայլովան՝ «Վեհափառի Ավետարանի մանրանկարները» թեմայով և արևմտագերմանացի գիտնական Հ.Հոֆրիխտերը, ում ելույթը նվիրված էր Կիլիկիայի հայկական ամրոցների կառուցման ոճին և մեթոդին: Իտալահայ գիտնական Գաբրիելա Ուլուիոջյանը գիտաժողովի մասնակիցներին հաղորդեց Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի պրոֆեսոր Ադրիանո Ալպագո Նովելլոյի ողջույնը, ով չէր կարողացել ներկա գտնվել: Նա նաև գիտաժողովի կազմկոմիտեին մատուցեց հայ արվեստին նվիրված III գիտաժողովի նյութերի՝ Իտալիայում հրատարակված ժողովածուն³⁵:

1988թ. մայիսի 28-ից հունիսի 5-ը Իտալիայում Վենետիկի համալսարանի եվրասիական հետազոտության ամբիոնի, Միլանի

³⁴ 1985 թվականի սեպտեմբերի 11-ի համերգի հայտագիր, Համաձայնագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ:

³⁵ Նույն տեղում, էջ 95, 96:

հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի, Վենետիկի «Պադու-արաքս» ասոցիացիայի և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի աջակցությամբ կայացավ հայ արվեստին նվիրված հինգերորդ սիմպոզիումը՝ «Հայաստանը՝ քաղաքակրթությունների խաչմերուկում» խորագրով, որին հաջորդեց սիմպոզիումների զեկուցումների հրատարակումն առանձին ժողովածուներով³⁶:

Ինչպես նշում է Արվեստի ինստիտուտի փոխտնօրեն Աննա Ասատրյանը. «Ըստ էության՝ 1988-ին Իտալիայում կայացած Հայ արվեստին նվիրված հինգերորդ միջազգային սիմպոզիումը դարձավ Արվեստի ինստիտուտի Ոսկեդարի եզրափակիչ ակորդը: Դրանից հետո հայտնի պատճառներով խոսք անգամ չէր կարող լինել նման խոշորամասշտաբ միջոցառումների մասին...»³⁷:

Տարիներ անց՝ 2005թ. հոկտեմբերի 5-ին, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Իտալիայի Հանրապետության նախագահ Կառլո Աձելիո Չամպիի բարձր հովանու ներքո մեկնարկեցին «Տեսիլ գերկիրն Իտալիո...» հայ-իտալական բարեկամության օրերը, որի շրջանակում ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում հոկտեմբերի 7-8-ը գումարվեց հայ-իտալական պատմամշակութային առնչություններին նվիրված «Վենետիկյան ընթերցումներ» երկօրյա միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին շուրջ 30 հայագետներ Հայաստանից և Իտալիայից³⁸: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանն իր «Հայ-իտալական գեղարվեստական աղընչությունները» զեկուցման մեջ (խոսքը հիմնականում ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության, թատրոնի՝ հայերի և իտալացիների միջև զարգացող փոխադարձ շփումների մասին էր) հիշատակեց արվեստագետների և մշակութային գործիչների անուններ, որոնցից շատերը հայտնի են միայն մասնագետների նեղ շրջանում կամ մոռացված և անհայտ են³⁹: Այնուհետև գիտա-

³⁶ Տե՛ս **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 133-136: ATTI, Del quinto simposio internazionale di arte Armena, Vebezia, Milano-Bologna-Firenze, 1988, 28 maggio-5 giugno, - SanLazzaro-Venezia, -859 p, ill.

³⁷ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 137:

³⁸ Նույն տեղում, էջ 198, 199:

³⁹ **Ասատրյան Ա.**, «Վենետիկյան ընթերցումներ» միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ-իտալական պատմամշակութային առնչություններին, «Պատմա-

ժողովն իր աշխատանքը ծավալեց երկու մասնաճյուղերի նիստերում՝ «Մխիթարյան միաբանությունը ու Վենետիկը» և «Հայերն ու Իտալիան. մշակույթ և արվեստ»:

Գիտաժողովի ընթացքում ներկայացված առավել հետաքրքիր զեկուցումները տպագրվեցին գիտաժողովին ընդառաջ լույս տեսած «Տեսի զերկիրն Իտալիո...» պատկերագրքում և Վենետիկում լույս ընծայվող «Բազմավեպ» հանդեսի՝ 2006 թվականի համարում («Բազմավեպ», 2006, Վենետիկ-Ս.Ղազար, ՃԿԴ տարի, թիվ 1-4):

Փաստորեն 17-ամյա դադարից հետո վերստին աշխուժացավ հայ-իտալական երբեմնի արգասաբեր և բեղուն համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Իտալիայի հայագետների միջև⁴⁰:

«Հայ-իտալական պատմամշակութային առնչություններին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպման և անցկացման համար» ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը և տնօրենի տեղակալ Աննա Ասատրյանը պարգևատրվեցին ՀՀ ԳԱԱ պատվոգրերով:

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԵՐԸ

1970-ականների կեսերին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը հիմնարկեց հայ արվեստին նվիրված հանրապետական գիտական կոնֆերանսներ, որոնք դարձան ավանդական: Հայ արվեստի և ճարտարապետության հիմնախնդիրներին նվիրված հանրապետական առաջին գիտական կոնֆերանսը կայացավ 1975-ին՝ Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի հետ համատեղ⁴¹: Կոնֆերանսի

բանասիրական հանդես», Երևան, 2005, 3 (170), էջ 293, 294:

⁴⁰ Տե՛ս **Ասափրյան Ա.**, «Վենետիկյան ընթերցումներ» միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ-իտալական պատմամշակութային առնչություններին, «Պատմաբանասիրական հանդես», 2005, N 3 (170), էջ 292-296:

⁴¹ Հանրապետական առաջին գիտական կոնֆերանսը՝ նվիրված հայ արվեստի և ճարտարապետության պրոբլեմներին (զեկուցումների թեգեր, Երևան, 1975), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 46 էջ:

ընթացքում ներկայացված 22 զեկուցումներում արծարծվեցին վաղմիջնադարյան ճարտարապետության, թատրոնի և կերպարվեստի՝ մասնավորապես մանրանկարչության պատմության, տեսության և գեղագիտության հարցերը (Մուրադ Հասրաթյան՝ «Ամարասի վանքի ճարտարապետությունը», Վանիկ Խաչատրյան՝ «Գույնը որպես գեղագիտական էլեմենտ՝ միջնադարյան Հայաստանի գեղագիտության մեջ», Հենրիկ Հովհաննիսյան՝ «Խմբապարային դրամայի նախատիպը հայկական վաղ միջնադարում» և այլք):

Մեկ տարի անց՝ Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանի (Մոսկվա) հետ համագործակցությամբ 1976 թ. մայիսի 5-8-ը, գումարվեց Հայաստանի կուլտուրայի և արվեստի հիմնախնդիրներին նվիրված հանրապետական երկրորդ գիտական կոնֆերանսը, որի աշխատանքները ծավալվեցին գիտական երկու մասնաճյուղերում՝

1. Հին ու միջնադարյան արվեստ,

2. Ժամանակակից արվեստ⁴²:

Նստաշրջանի բացմանը ներածական խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը: Քառօրյա կոնֆերանսի ընթացքում ներկայացվեց 61 զեկուցում, որից 10-ը օտարերկրյա գիտնականների ելույթներն էին: Կոնֆերանսի աշխատանքներն ամփոփվեցին էքսկուրսիայով դեպի Գառնի և Գեղարդ:

Ինչպես տեսնում ենք, հանրապետական կոնֆերանսների կազմակերպումը դառնում է ավանդական և ամենամյա, աշխատանքներն ընթանում են առանձին մասնաճյուղերում, և հրատարակվում են զեկուցումների թեգիսները:

Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական երրորդ գիտական կոնֆերանսը կայացավ 1977 թ. մայիսի 4-7-ը (58 զեկուցում, արտասահմանից 9 մասնա-

⁴² Հայաստանի կուլտուրայի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական երկրորդ գիտական կոնֆերանս (զեկուցումների թեգեր, Երևան, 5-8 մայիսի, 1976), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1976, 192 էջ:

կից)⁴³, իսկ 1979թ. սեպտեմբերի 18-22-ը Հայաստանի ազգագրության պետական թանգարանի հետ համատեղ Երևանում և Սարգսյան պատում Արվեստի ինստիտուտը գումարեց Հայաստանի մշակույթի և արվեստի հիմնախնդիրներին նվիրված հերթական՝ չորրորդ հանրապետական գիտական կոնֆերանսը⁴⁴:

Կոնֆերանսը, որի փակումը կայացավ Սարգսյան պատում՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, անցկացվեց 4 մասնաճյուղով՝ Հին և միջնադարյան արվեստի մասնաճյուղ (ղեկավար՝ ճարտ. դոկտոր Ստեփան Մնացականյան), Թատրոնի և երաժշտության մասնաճյուղ (ղեկավար՝ արվ. թեկնածու Գևորգ Գյոդակյան), Ժամանակակից կերպարվեստի մասնաճյուղ (ղեկավար՝ արվ. թեկնածու Նոնա Ստեփանյան), Ժամանակակից ճարտարապետության մասնաճյուղ (ղեկավար՝ Լևոն Բաբայան): Լսվեց 88 զեկուցում, որից 22-ը արտասահմանյան գիտնականների բանախոսություններն էին: Նստաշրջանն աչքի ընկավ ինչպես մասնակիցների աննախադեպ մեծ թվով, բազմաքանակ օտարերկրյա մասնակիցներով, այնպես էլ լայն աշխարհագրությամբ. ներգրավված էին գիտնականներ Բաքվի, Թեոդոսիայի, Մոսկվայի, Լենինգրադի, Լվովի, Թբիլիսիի և Երևանի գիտական ու մշակութային օջախներից:

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի համագործակցությամբ 1982-ի հոկտեմբերի 12-16-ը տեղի ունեցավ Հայաստանի մշակույթի և արվեստի հիմնախնդիրներին նվիրված հանրապետական գիտական հինգերորդ նստաշրջանը, որը նվիրվեց ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին⁴⁵: Ընթերցվեց 132 զեկու-

ցում, որոնցից 38-ի հեղինակներն արտասահմանյան մասնակիցներն էին: Բանախոսությունների թեմատիկ բազմազանության մեջ գերակշռում էին հին և միջնադարյան արվեստի, ինչպես նաև հուշարձանների վավերացման, վերականգնման և յուրացման հարցերին նվիրված ելույթները:

Հայաստանի մշակույթի և արվեստի հիմնախնդիրներին նվիրված վեցերորդ կոնֆերանսը, որը նվիրված էր Մեծ Հոկտեմբերի 70-ամյակին, գումարվեց 1987 թ. հունիսի 2-4-ը Երևանում⁴⁶: Կրկին ավանգարդում էին հին և միջնադարյան արվեստին նվիրված զեկուցումները: Ու թեպետ 121 բանախոսներից 46-ը արտասահմանյան մասնակիցներ էին, այդուհանդերձ, գիտական նստաշրջանը համարվել է հանրապետական:

Նշենք, որ խորհրդային արվեստին նվիրված զեկուցումներն առանձին մասնաճյուղով առաջին անգամ ներկայացան հինգերորդ և վեցերորդ կոնֆերանսներում:

Հավելենք, որ վերևում հիշատակված II, III, V, VI, հանրապետական գիտական կոնֆերանսները եզրափակվել են դեպի Հայաստանի պատմամշակութային կոթողներ կազմակերպված էքսկուրսիաներով:

Տևական դադարից հետո՝ 1995թ. հոկտեմբերի 10-12-ը, գումարվեց Հայ արվեստին նվիրված յոթերորդ հանրապետական գիտական կոնֆերանսը⁴⁷: Ներկայացված 62 զեկուցումները բաշխված էին կերպարվեստի, ճարտարապետության, երաժշտության ու թատրոնի մասնաճյուղերում:

Հայ արվեստին նվիրված հանրապետական ութերորդ գիտական նստաշրջանը տեղի ունեցավ Երևանում 1997թ. հոկտեմբերի 28-29-ը⁴⁸: Գիտական մասնաճյուղերում (ճարտարապետության,

⁴³ Հանրապետական երրորդ գիտական կոնֆերանսը՝ նվիրված Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին (զեկուցումների թեզեր, Երևան, 4-7 մայիսի, 1977), Երևան, 1977, 178 էջ:

⁴⁴ Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված չորրորդ հանրապետական գիտական կոնֆերանս (զեկուցումների թեզեր, Երևան-Սարգսյան պատ, 18-22 սեպտեմբերի, 1979), 1979, 291 էջ:

⁴⁵ Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հինգերորդ հանրապետական գիտական կոնֆերանս (զեկուցումների թեզեր, Երևան, 12-16 հոկտեմբերի, 1982), 1982, 481 էջ:

⁴⁶ Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված վեցերորդ հանրապետական գիտական կոնֆերանս (զեկուցումների թեզեր, Երևան, 2-4 հունիսի, 1987), Երևան, 1987, 264 էջ:

⁴⁷ Հայ արվեստին նվիրված յոթերորդ հանրապետական գիտական կոնֆերանս (զեկուցումների թեզեր, Երևան, 10-12 հոկտեմբերի, 1995), Երևան, 1995, 105 էջ:

⁴⁸ Հայ արվեստին նվիրված հանրապետական ութերորդ գիտական կոնֆերանս (զեկուցումների թեզեր, Երևան, 28-30 հոկտեմբերի, 1997), Երևան, 1997, 96 էջ:

կերպարվեստի և երաժշտության) ընթերցվեց 50 զեկուցում: Հայ արվեստին նվիրված յոթերորդ և ութերորդ հանրապետական գիտական նստաշրջանների մասնակիցների մեծամասնությունն Արվեստի ինստիտուտի աշխատակիցներն էին:

Ավանդական և շարունակական դարձած՝ Հայաստանի մշակույթի և արվեստի հիմնախնդիրներին նվիրված հանրապետական գիտական կոնֆերանսների կազմակերպման գործում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը համագործակցում էր Արևելքի ժողովուրդների արվեստի թանգարանի (Մոսկվա), Երևանի պետական համալսարանի և Հայաստանի ազգագրության պետական թանգարանի (այժմ՝ Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան) հետ:

2008 թ. մայիսի 1-ին լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ծննդյան կեսդարյա հոբելյանը: Այդ կապակցությամբ 2009թ. նոյեմբերի 5-6-ը գումարվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված հանրապետական իններորդ գիտական նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցեցին շուրջ 40 արվեստաբաններ: Թեև զեկուցողների հիմնական կորիզը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտնականներն էին, սակայն մասնակիցների շարքում էին Մատենադարանի, Երևանի պետական համալսարանի, Հայկական բաց համալսարանի, Գեղարվեստի պետական ակադեմիայի և գիտամշակութային այլ օջախների գիտնականները⁴⁹:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը 2001 թ. հոկտեմբերի 17-19-ը գումարեց «Քրիստոնեական Հայաստանի արվեստը» խորագրով գիտաժողովը, որը նվիրված էր Հայաստանում քրիստո-

⁴⁹ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հրամանով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 50-ամյա հոբելյանի կապակցությամբ ՀՀ մշակույթի նախարարության բարձրագույն պարգևով՝ «Ոսկե մեդալով», պարգևատրվեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երկարամյա փոխտնօրեն, երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Գյոդակյանը և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանը, տե՛ս *Ասպրոյան Ա.*, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 15-19:

նության՝ որպես պետական կրոնի հռչակման 1700-ամյակին⁵⁰: Գիտաժողովի կազմկոմիտեի աշխատանքներում ներգրավվեցին Մուրադ Հասրաթյանը (նախագահ), Սեյրանուշ Մանուկյանը (պատասխանատու քարտուղար), Արարատ Աղասյանը և Վիգեն Ղազարյանը (անդամներ):

Ընթերցված 35 զեկուցումներում ներկայացվեցին միջնադարյան կերպարվեստի, ճարտարապետության և թատրոնի պատմության հարցերը (Վահրամ Թաթևկյան՝ «Քրիստոնեական և ազգակից հորինվածքները հայկական գորգարվեստում», Վարազդատ Հարությունյան՝ «Քրիստոնեության ընդունման անդրադարձը վաղ միջնադարի հայկական ճարտարապետության զարգացման գործընթացում», Հենրիկ Հովհաննիսյան՝ «Թատրոն-եկեղեցի հարաբերությունը միջնադարում», ինչպես նաև լսվեցին նոր շրջանի կերպարվեստի ուսումնասիրությանը վերաբերող զեկուցումներ (Նոնա Ստեփանյան՝ «Հայ նկարիչները XX դարի ռուսական մշակույթում», Մարինա Ստեփանյան՝ «Ականավոր հոգևորականների կերպարները նոր ժամանակի հայ նկարիչների ստեղծագործության մեջ», Գարեգին Քոթանջյան՝ «Եղիշե Թադևոսյանի «Քրիստոսը և փառիսեցիները կտավը»):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԸ

Տարիներ շարունակ Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական հետաքրքրությունների շրջանակում է գտնվել հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրությունը: Այս համատեքստում հատուկ կարևորություն են ստանում 1970-ական թվականներին սկիզբ առած հայ-վրացական գիտական շփումները, ինչպես նաև Հայաստանի և Վրաստանի արվեստի հիմնահարցերին նվիրված համատեղ գիտական կոնֆերանսների կազմակերպումը:

⁵⁰ Միջազգային գիտաժողով «Քրիստոնեական Հայաստանի արվեստը» (զեկուցումների թեզեր, Երևան, հոկտեմբերի 7-9, 2001), 68 էջ:

Վրացական ՍՍՀ ԳԱ Գ. Չուբինաշվիլու անվան արվեստի պատմության ինստիտուտի և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ 1979 թ. ապրիլի 23-28-ը Թբիլիսիում գումարվեց հայկական և վրացական արվեստի խնդիրներին նվիրված համատեղ առաջին գիտական կոնֆերանսը⁵¹, որի բացմանը ելույթ ունեցան Վրացական ՍՍՀ ԳԱ Գ. Չուբինաշվիլու անվան արվեստի պատմության ինստիտուտի դիրեկտոր, վրացական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վախթանգ Բերիձեն և Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դեկորատիվ և կիրառական արվեստի բաժնի վարիչ Մանյա Ղազարյանը: Նրանք կարևորեցին նմանատիպ գիտական շփումների անհրաժեշտությունը, ինչը նպաստում է երկու ժողովուրդների մշակութային ժառանգության համատեղ հետազոտմանը:

Արվեստի ինստիտուտի գիտական բազմապրոֆիլ կողմնորոշումը ինքնըստինքյան հանգեցրեց թբիլիսյան նստաշրջանին մասնակցելուն⁵²: Գիտաժողովը նվիրված էր ճարտարապետության պատմության, մանրանկարչության, որմնանկարչության, հաստոցային գեղանկարչության, գրաֆիկայի և դեկորատիվ-կիրառական արվեստի ուսումնասիրությանը, ինչպես նաև առկա էին գեկուցումներ թատերագիտության և երաժշտագիտության վերաբերյալ: Հայաստանից՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտից, մասնակցում էր 11 գիտնական, իսկ Վրաստանից՝ ՎՍՍՀ ԳԱ Գ. Չուբինաշվիլու անվան վրացական արվեստի պատմության ինստիտուտից, Թբիլիսիի գեղարվեստի պետական ակադեմիայից, Վ.Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայից, Շ.Ռուսթավելու անվան պետական թատերական ինստիտուտից, Վրաստանի արվեստի պետական թանգարանից ներգրավված էր 18 մասնակից:

Հայաստանի և Վրաստանի արվեստի խնդիրներին նվիրված երկրորդ գիտական կոնֆերանսը կայացավ 1981թ. հունիսի 3-6-ը

⁵¹ Совместная научная конференция, посвященная вопросам армянского и грузинского искусства (план работы и тезисы докладов, Тбилиси, апрель, 1979), Тбилиси, 1979, 47 стр.

⁵² Տե՛ս **Մնացականյան Ս.** Научная конференция, посвященная вопросам армянского и грузинского искусства, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1979, 3 (86), էջ 293:

Երևանում և Սարդարապատում⁵³: Վերջինիս կազմակերպիչներն էին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Վրացական ՍՍՀ ԳԱ Գ. Չուբինաշվիլու անվան արվեստի պատմության ինստիտուտը և Հայաստանի ազգագրության պետական թանգարանը: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին երկու եղբայրական հանրապետությունների շուրջ 50 գիտնականներ: Իր բացման խոսքում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռուբեն Զարյանը նշեց. «Հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապերի պատմության տարեգրությունը լի է երկու ժողովուրդների բարեկամությունը վկայող բազմաթիվ էջերով, և մեր արվեստագետների համագործակցությունը նպաստում է երկու դրկից ժողովուրդների արվեստի էլ ավելի մերձեցմանն ու հետագա զարգացմանը»⁵⁴:

Կոնֆերանսն աշխատանքները ծավալեց հին և միջնադարյան արվեստի սեկցիայի և նոր ու խորհրդային շրջանի արվեստի բաժիններում:

Հայ-վրացական մշակութային փոխառնչությունների հիմնահարցերին նվիրված միջհանրապետական հերթական գիտական կոնֆերանսը տեղի ունեցավ 1989 թ. մարտի 2-4-ը Թբիլիսիում՝ Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ժողովուրդների բարեկամության թանգարանի և Հայաստանի ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի համագործակցությամբ⁵⁵: 24 բանախոսություններից 9-ը նվիրված էր հայ-վրացական արվեստի փոխառնչություններին (այդ թվում՝ Մարիամ Այվազյան՝ «Գ.Գրիգորյանի գեղանկարչական ոճի ձևավորումը. թիֆլիսյան շրջան», Նոնա Ստեփանյան՝ «Սերգեյ Փարաջանովը որպես գեղանկարիչ» և այլք):

⁵³ II Межреспубликанская научная конференция по проблемам искусства Армении и Грузии (тезисы докладов, Ереван-Сардапат, 3-6 июня 1981), 1981, 72 стр.

⁵⁴ **Շահնազարյան Ա.**, Հայաստանի և Վրաստանի արվեստի պրոբլեմներին նվիրված երկրորդ միջհանրապետական կոնֆերանսը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1981, 7 (463), էջ 119:

⁵⁵ Межреспубликанская научная конференция по проблемам грузино-армянских культурных взаимосвязей (тезисы докладов, Тбилиси, 2-4 марта, 1989), Тбилиси, 1989, 32 стр.

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՆ

Վերջին տարիներին ակտիվացել է Արվեստի ինստիտուտի համագործակցությունը Ճարտարապետության և շինարարական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի Ճարտարապետության և քաղաքաշինության տեսության և պատմության գիտահետազոտական ինստիտուտի հետ: Վերջինիս հետ համատեղ 2019-ից ավանդաբար տարեսկզբին Մոսկվայում կազմակերպվում է «Ճարտարապետություն, ժառանգություն, ավանդույթ և նորարարություն» խորագրով միջազգային կոնֆերանսը: 2019թ. փետրվարի 26-27-ը գումարվեց «Архитектура: наследие, традиции и новации» խորագրով առաջին միջազգային կոնֆերանսը⁵⁶, որի աշխատանքներին մասնակցեցին Արվեստի ինստիտուտի գիտաշխատակիցներ՝ ճարտարապետության դոկտոր Դավիթ Քերթմենյանը, ճարտարապետության թեկնածուներ Անուշ Տեր-Մինասյանը և Հրանտ Հովսեփյանը: 2020թ. փետրվարի 26-27-ին գումարվեց «Архитектура: наследие, традиции и новации» միջազգային կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցեց Անուշ Տեր-Մինասյանը:

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը 1958թ. ստեղծվեց ՀՍՍՀ ԳԱ Արվեստների պատմության ու տեսության սեկտորի հիման վրա, որն իր հերթին 1948-ին կազմավորվել էր ՀՍՍՀ ԳԱ համակարգում 1944-ին հիմնադրված Երաժշտության պատմության և տեսության սեկտորի հիման վրա: Ուստի պատահական չէ, որ առաջին գիտական միջոցառումները հենց երաժշտագիտական էին:

«1944թ. հոկտեմբերի 28-31-ին գումարվում է երաժշտության պատմության ու տեսության սեկտորի կազմակերպած գիտական սեսիան, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս Արամ Քոչարյանը՝ «Երաժշտական գործիքները և գործիքային արվեստը Հայաստանում», Քրիստափոր Քուշնարյանը՝ «Շարականների լադային առանձնահատկությունները» և Գեորգի Տիգրանովը՝ «Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի երաժշտական դրամատուրգիան» թեմաներով: 1945թ. ապրիլի 3-ին գումարվում է երաժշտության պատմության ու տեսության սեկտորի կազմակերպած գիտական սեսիան՝ նվիրված Ռոմանոս Մելիքյանի մահվան 10-ամյակին, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս Ա.Քոչարյանը՝ «Հայ երաժշտական լեզվի զարգացման հիմնական էտապները և Ռոմանոս Մելիքյանի տեղն ու դերը հայ երաժշտության մեջ», Կ.Մելիք-Վրթանեսյանը՝ «Ռոմանոս Մելիքյանի երաժշտական ժառանգությունը» թեմաներով: 1945թ. դեկտեմբերի 25-ին Սեկտորը գումարում է գիտական սեսիա, որտեղ կարդացվում են հետևյալ զեկուցումները՝ Ալեքսանդր Շահվերդյան՝ «Կոմիտասի էթնոգրաֆիկ ժառանգությունը», Քրիստափոր Քուշնարյան՝ «Հայ եկեղեցական երաժշտության պատմական արմատների շուրջ», Գեորգի Տիգրանով՝ «Տ.Չոլիսաջյանի օպերային ժառանգությունը»⁵⁷:

Շարունակելով երաժշտագիտական հրատապ խնդիրներին նվիրված գիտաժողովների կազմակերպման ավանդույթը՝ Արվեստի ինստիտուտը, ՍՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի համաշխարհային մշակույթի պատմության գիտական խորհրդի և Հայաստանի կոմպոզիտորների միության համագործակցությամբ, 1986թ. հոկտեմբերի 24-30-ը Դիլիջանում գումարում է «Երաժշտական մշակույթի վաղ ձևերի ծագման և առանձնահատկության խնդիրները» գիտական կոնֆերանսը⁵⁸: Ներկայացված 30 զեկուցումներից 14-ը արտասահմանյան մասնակիցների ելույթներն էին: Հատկապես նշելի են Գ.Գյոդակյանի «Հայկական խազային նոտա-

⁵⁷ Ասադրյան Ա., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50, էջ 26, 27:

⁵⁸ Конференция “Проблемы генезиса и специфики ранних форм музыкальной культуры” (тезисы докладов, Дилижан-Ереван, 24-30 октября, 1986), 1986, 74 стр.

⁵⁶ <http://www.icoaiti.org/2019/?0.17744865400231713> (11.10.2019):

գրության համակարգի մասին» և Ն.Ջաուարի «Արխաիկ երաժշտական մտածողությունը քրդական ժողովրդական երգերում» բանախոսությունները:

Իսկ արդեն 1992թ. մայիսի 26-29-ը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության գործակցությամբ գումարվեց «Երաժշտական տեքստի վերլուծության խընդիրները ու մեթոդները» գիտական կոնֆերանսը⁵⁹, որի ընթացքում ներկայացվեցին ինստիտուտի աշխատակիցներ Մարգարիտա Ռուսկյանի «Երաժշտական վերլուծության իմաստային ասպեկտը (հայեցակետ)» և Անահիտ Գրիգորյանի «Մոնոդիայի վերլուծությունը ֆոնիզմի պրոբլեմի լույսի ներքո» բանախոսությունները: Նկատում ենք, որ զեկուցողների թե՛ ընդհանուր թվաքանակով և թե՛ օտարերկրյա մասնակիցների ներգրավվածությամբ այս կոնֆերանսը զիջում էր նախորդին՝ 19 զեկուցում, 9 արտասահմանյան բանախոս:

Հայ աշուղագիտության արդի հիմնախնդիրներին նվիրված գիտական նստաշրջանը գումարվեց 2005թ. ՀՀ մշակույթի և երիտասարդության նախարարության և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համագործակցությամբ⁶⁰: Ներկայացված 11 ելույթներում արծարծվեցին աշուղական երգարվեստի ձևավորմանը, ժանրային, թեմատիկ առանձնահատկություններին և կատարողական ավանդույթին առնչվող պատմատեսական և մշակութաբանական խնդիրներ:

⁵⁹ Конференция “Проблемы и методы анализа музыкального текста” (тезисы докладов, Ереван, 26-29 мая, 1992), Ереван, 1992, 32 стр.

⁶⁰ Հայ աշուղագիտությունը և արդի հիմնախնդիրները (գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Երևան, 2005, 102 էջ:

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԵՎԵԼԻՆԵՐԻ ՀՈՐԵԼՅԱՆՆԵՐԸ

Արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված գիտական նստաշրջանների շարքում առանձին խումբ են կազմում մշակութային երևելի գործիչների հորեղաններին նվիրված միջոցառումները, որոնց թվում քանակով առաջատարն է երաժշտագիտությունը: Տվյալ բնագավառի գիտաժողովների կազմակերպման գործում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը սերտ համագործակցում էր երաժշտական երկու կարևոր կառույցների՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ:

1949թ. սեպտեմբերի 26-ին լրացավ **Կոմիտասի** ծննդյան 80-ամյակը: Կոմիտասի հորեղանական միջոցառումների եզրափակիչ ակորդը դարձավ նրան նվիրված առաջին գիտական նստաշրջանը, որը Երևանի Արվեստի աշխատողների տանը հոկտեմբերի 4-ին գումարեցին ՀՍՍՌ ԳԱ Արվեստների պատմության և տեսության սեկտորն ու Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան⁶¹: Սեսիային «...ներկա էին բազմաթիվ կոմպոզիտորներ, երաժշտագետներ, արվեստի այլ բնագավառների աշխատողներ, դասատուներ և ուսանողներ: Նստաշրջանի բացման խոսքում Կոնսերվատորիայի դիրեկտոր Կ.Ս.Սարաջևը հակիրճ բնութագրել է Կոմիտասի՝ որպես հանճարեղ կոմպոզիտորի և մեծ մտածողի գործունեությունը, ապա զեկուցումներով հանդես են եկել Սեկտորի աշխատակիցները՝ Մաթևոս Մուրադյանը ներկայացրել է «Կոմիտասի տեղն ու նշանակությունը հայկական երաժշտության պատմության մեջ», Ռոբերտ Աթայանը՝ «Ժողովրդական երգի հարմոնիզացիայի կոմիտասյան սկզբունքը» և Մուշեղ Աղայանը՝ «Կոմիտասի երգային կատարողական արվեստը» բանախոսությունները⁶²: Սեսիայի ընթացքում ներկայացված բոլոր երեք զեկուցումներն

⁶¹ Տե՛ս **Ասաբրյան Ա.**, Երաժշտագիտության հարցերը «Լրաբերի» էջերում. ակադեմիական կոմիտասագիտության ձևավորումն ու զարգացումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, № 3 (660), էջ 138:

⁶² Գիտական սեսիա, նվիրված Կոմիտասի ծննդյան 80-ամյակին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1949, N 9, էջ 115:

իր հերթական համարներում տպագրում է «ՀԱՅԿ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների» պարբերականը:

ՀԱՅԿ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միության և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գործակցությամբ 1969 թ. նոյեմբերի 17-ին կազմակերպեց գիտական նստաշրջան՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին: Ընթերցված 15 զեկուցումները նվիրված էին հանճարեղ երգահանի ստեղծագործությանը (Գ.Գյոդակյան՝ «Կոմիտասը և համաշխարհային երաժշտությունը», Ռ.Շեցկուս՝ «Կոմիտասը Բեռլինում» և այլն), որոնցից 5-ը արտերկրյա մասնակիցներ էին Թբիլիսիից, Ռիգայից, Նովոսիբիրսկից, Կազանից, Լայպցիգից:

1989 թ. լրացավ Կոմիտասի ծննդյան 120-ամյակը: Այդ առիթով Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դահլիճում 1989թ. նոյեմբերի 18-ին և 20-ին կայացավ Կոմիտասի ծննդյան 120-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը, որի կազմակերպիչներն էին ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը, Հայաստանի երաժշտական ընկերությունը և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: 15 զեկուցումներն ընծայված էին մեծահամբավ կոմպոզիտորի երաժշտագիտական վաստակի արժևորմանը⁶³:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համար 2019 թվականն անցավ կոմիտասյան նշանաբանի ներքո: Սեպտեմբերի 20-22-ը Մոսկվայում Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված՝ Արվեստի ինստիտուտը Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի նախաձեռնությամբ գումարեց «Ազգային դասականները համաշխարհային զեղարվեստական արժեքների համատեքստում» խորագրով միջազգային գիտական կոնֆերանսում իր աշխատանքները ծավալեց «Կոմիտասի ստեղծագործության դերն ու նշանակությունը հայ մշակույթում» մասնաճյուղը⁶⁴: Գիտական նստաշրջանում բացման

խոսքով հանդես եկավ Հայ առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը: Մասնակիցներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անունից ողջունեց Անուշավան արքեպիսկոպոս Ժամկոչյանը:

Ողջույնի խոսքերով հանդես եկան Մոսկվայի Պ.Ի.Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի պրոռեկտոր Կոնստանտին Իվանովիչ Ջենկինը, Գնեսինների անվան ռուսական երաժշտական ակադեմիայի՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Դինա Կոնստանտինովնա Կիրնարսկայան և այլք: Լիագումար նիստում առաջին զեկուցումը՝ «Կոմիտասի դերն ու նշանակությունը հայ մշակույթում», ներկայացրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը, իսկ Կոմիտասի կերպարը հայ նկարիչների և քանդակագործների ստեղծագործության մեջ թեման համակողմանիորեն ուսումնասիրեց և լուսաբանեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր Արարատ Աղասյանը՝ «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով»: «Բինգյուլ վիպերգը Կոմիտասի գրառումներում» բանախոսության հեղինակն էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանը, իսկ երաժշտագետ, Արվեստի ինստիտուտի գիտաշխատող Անի Հակոբյանը արծարծեց «Հայ ժողովրդական օրորները. Կոմիտասից մինչև մեր օրերը» թեման: Հատկանշական է, որ կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին ոչ միայն երաժշտագետներ: Այսպես, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլովսանյանը հանդես եկավ «Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը Կոմիտասի մասին», իսկ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Քերթմենջյանը՝ «Կոմիտա-

⁶³ Կոմիտաս-120 (գիտաժողովի ծրագիր, Երևան, նոյեմբերի 18,20, 1989):

⁶⁴ **Սարգսյան Լ.**, Կոմիտասին նվիրված գիտական կոնֆերանս Մոսկվայում (Արվեստի ինստիտուտը պատրաստվում է Վարդապետի ծննդյան 150-ամյակին), «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2019, 4 հունիսի, էջ 4:

սին նվիրված հայկական ճարտարապետական հուշարձանները» բանախոսությամբ (անգլերեն)⁶⁵:

2019թ. սեպտեմբերի 20-ի երեկոյան Մոսկվայի Պ.Ի.Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի մեծ համերգասրահում տեղի ունեցավ Կոմիտասի հորեղանին նվիրված փառահեղ համերգ՝ հայ և օտարազգի երաժիշտների մասնակցությամբ⁶⁶:

Արվեստի ինստիտուտի հորեղանական միջոցառումների եզրափակիչ ակորդը դարձավ «Կոմիտաս-150» գիտական նստաշրջանը, որը գումարվեց 2019թ. նոյեմբերի 29-30-ը ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ: Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ գումարվեց գիտական նստաշրջան, որի բոլոր զեկուցումների առանցքում բացառապես Կոմիտասի կյանքն ու գործունեությունն էր, ինչպես նաև նրա կերպարը հայ արվեստում և գրականության մեջ⁶⁷:

1951թ. նոյեմբերի 5-ին գումարվեց հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, հայ դասական երաժշտության ականավոր ներկայացուցիչ, մեծանուն կոմպոզիտոր **Ալեքսանդր Սպենդիարյանի** ծննդյան 80-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը: Իսկ 1971թ. դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ կոմպոզի-

տորի 100-ամյա հորեղանին նվիրված գիտական նստաշրջանը: Բացման խոսքում Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը տվեց Սպենդիարյանի ստեղծագործության հակիրճ բնութագիրը և ընդգծեց այն խոշոր նշանակությունը, որ նա ունեցել է հայ դասական երաժշտության զարգացման գործում: Արվեստագիտության թեկնածու Նիկողոս Թահմիզյանը «Ալ. Սպենդիարյանի երաժշտական լեզվամտածողության զարգացումը» բանախոսության մեջ ցույց տվեց այն էվոլյուցիան, որին ենթարկվել է կոմպոզիտորի երաժշտական ոճը՝ ընդհանուր եվրոպականից դեպի նոր արևելյան: «Ալմաստ» օպերայի ժանրային հատկանիշների բնութագրության հարցերին էր նվիրված Գևորգ Գյոդակյանի զեկուցումը: Նա «Ալմաստը» բնութագրեց որպես դրամատիկական, խոր հոգեբանական օպերա, որի մեջ առկա է նաև հայրենասիրական թեման⁶⁸:

2021թ. հոկտեմբերի 7-8-ին Արվեստի ինստիտուտը Սպենդիարյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ կգումարի «Ալեքսանդր Սպենդիարյան - 150» միջազգային գիտական նստաշրջանը:

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության ակտիվ համագործակցությունը շարունակվեց հետագայում⁶⁹: Գումարվեցին Գեորգի Տիգրանովի ծննդյան 70-ամյակին (1978), Արմեն Տիգրանյանի ծննդյան 100-ամյակին (27 մայիսի, 1981), Քրիստափոր Քուչնարյանի ծննդյան 90-ամյակին (15 ապրիլի, 1981), Սպիրիդոն Մելիքյանի ծննդյան 100-ամյակին (29 դեկտեմբերի, 1981), Ռոմանոս Մելիքյանի ծննդյան 100-ամյակին

⁶⁵ Տե՛ս **Ասափրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և Կոմիտասի ծննդյան 150-ամյա հորեղանը, «Գիտության աշխարհում», Ե., 2020, № 1, էջ 2-9:

⁶⁶ **Սարգսյան Լ.**, Կոմիտասի դերն ու նշանակությունը հայ մշակույթում (Ազգային դասականները համաշխարհային գեղարվեստական արժեքների համատեքստում), «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2 հոկտեմբերի, 2019, էջ 1,6, **Асатрян А.** Международная научная конференция «Национальная классика в мировом художественном контексте. 150-летним юбилеям Комитаса и Ованесса Туманяна посвящается», «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2019, 3 (212), էջ 287:

⁶⁷ **Ասափրյան Ա.**, «Կոմիտաս-150» գիտական նստաշրջանն ու Արարատ Աղայանի «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» պատկերագիրը, «Գիտություն», Երևան, 2019, դեկտեմբեր, N 12 (336), էջ 2, **Մարտիրոսյան-Մարանջյան Ա.**, «Կոմիտաս-150» գիտական նստաշրջան, «Հայաստանյազ եկեղեցի», Մոսկվա, 2020, N 1 (126), էջ 11:

⁶⁸ **Մուրադյան Մ.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Ալ. Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1971, 4 (55), էջ 291:

⁶⁹ Երկար տարիներ Հայաստանի կոմպոզիտորների միության պատասխանատու քարտուղարն էր ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչ, հետագայում տնօրենի տեղակալ Գևորգ Գյոդակյանը, իսկ 1976-1982թթ. ՀԿՄ երաժշտագիտական սեկցիան ղեկավարում էր ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Կարինե Խուրաբաշյանը: Տե՛ս **Ասափրյան Ա.**, Հայաստանի կոմպոզիտորների միությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 70:

(24 նոյեմբերի, 1983), Արամ Խաչատրյանի ծննդյան 80-ամյակին (23 հունվարի, 1984), Տիգրան Չուխաճյանի ծննդյան 150-ամյակին (29 ապրիլի, 1987), Կոմիտասի ծննդյան 120-ամյակին (18-20 նոյեմբերի, 1989) նվիրված և այլ գիտական նստաշրջաններ⁷⁰:

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության ևս մեկ միացյալ գիտական նստաշրջան կայացավ 1974 թ. հոկտեմբերի 22-ին, որը նվիրված էր ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան և Պետական մրցանակների դափնեկիր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պրոֆեսոր **Արամ Խաչատրյանի** ստեղծագործությանն ու գործունեությանը: Նստաշրջանը տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ նախագահության նիստերի դահլիճում, որին մասնակցում էին համամիութենական երաժշտական մտքի առաջատար ուժերը: «Գիտական բարձր մակարդակով անցած նստաշրջանի առավոտյան և երեկոյան նիստերում հանդես են գալիս արվեստագիտության թեկնածու Գևորգ Գյուղակյանը՝ «Ա.Խաչատրյանը՝ սովետահայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Տամարա Վիգգոն (Տաշքենդ)՝ «Ա.Խաչատրյանի ստեղծագործական որոշ սկզբունքները և նրանց մարմնավորումը Սովետական Ուղբեկստանի կոմպոզիտորների պրակտիկայում», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեորգի Տիգրանովը՝ «Ա.Խաչատրյանի բալետների գեղագիտական սկզբունքները», արվեստագիտության թեկնածու Ն.Ալիևան (Բաքու)՝ «Ա.Խաչատրյանը և ադրբեջանական երաժշտությունը», արվեստագիտության թեկնածու Մարգարիտ Տեր-Սիմոնյանը՝ «Ա.Խաչատրյանը երաժշտության մասին», արվեստագիտության թեկնածու, Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության առաջին քարտուղար Գիվի Օրջոնիկիձեն (Թբիլիսի)՝ «Ա.Խաչատրյանի երաժշտական ոճի մի քանի հարցերի մասին», Արամ Խաչատրյանի մասին Մոսկվայում հրատարակված գրքի հեղինակ (1956), ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտագետ Իվան Մարտինովը (Մոսկվա)՝ «Ա.Խաչատրյանը և համաշխար-

հային երաժշտությունը», Լենինականում ծնված սովետական խոշոր երաժշտագետ և երաժշտական սոցիոլոգ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննոլդ Սոխորը (Լենինգրադ)՝ «Ազգային և միջազգային փոխհարաբերությունը Ա.Խաչատրյանի ստեղծագործության մեջ», արվեստագիտության թեկնածու Տատյանա Կուրիշևան (Ռիգա)՝ «Ա. Խաչատրյանը և նրա երաժշտությունը Սովետական Լատվիայում», Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, Վրացական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, Ա.Խաչատրյանի սան Նոդար Գաբունիան (Թբիլիսի)՝ «Ա.Խաչատրյան-մանկավարժի մասին», երաժշտագետ Նամի Միկոյանը (Մոսկվա)՝ «Ա.Խաչատրյանի կինոերաժշտությունը», փիլիսոփայական գիտությունների թեկնածու Նոնա Շահնազարովան (Մոսկվա)՝ «Հայաստանը Ա.Խաչատրյանի ստեղծագործություններում» և երաժշտագետ Ե.Կուրիլենկոն (Մոսկվա)՝ «Սպարտակը» որպես բալետ-ոդերբերգության ժանր» գեկուցումներով⁷¹:

Այսպիսով, «Ձեկուցողները Ա.Խաչատրյանի ստեղծագործություններն ու գործունեությունը լուսաբանեցին ու արժևորեցին պատմական, գեղագիտական, սոցիոլոգիայի և տեսական երաժշտագիտության տեսանկյուններից, ինչպես նաև տարբեր առումներով՝ թե՛ որպես ազգային երաժշտության ու մշակույթի երևույթ և թե՛ որպես Անդրկովկասի, Արևելքի սովետական և համամարդկային երաժշտական մշակույթի երևույթ:

Թեմայի բազմազանությունը և խորությունը գեկուցողներին առիթ ընձեռեց առաջադրել նոր մտքեր ու մոտեցման սկզբունքներ՝ ձևի ու բովանդակության, ազգային ու միջազգային, ավանդականի ու արդիականի, ոճի առանձնահատկությունների ու վարպետության մակարդակի հարցերի վերաբերյալ⁷²:

Վերջում ելույթ է ունենում ինքը՝ Արամ Խաչատրյանը: «Հիշում եմ, նա խոսեց ժողովրդի հանդեպ արվեստագետի վսեմ

⁷⁰ **Ասափրյան Ա.**, Հայաստանի կոմպոզիտորների միությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 70, 71:

⁷¹ **Ասափրյան Ա.**, Արամ Խաչատրյանը և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2018, 3 (209), էջ 26-28:

⁷² Տե՛ս **Մանուկյան Մ.**, Գիտական նստաշրջաններ, «Պատմաբանասիրական հանդես», 1974, N 4, էջ 254:

պարտքի մասին, շնորհակալություն հայտնեց ինստիտուտին գիտական նստաշրջանը կազմակերպելու համար, խոսեց զեկուցողների մասին, կանգ առավ ամեն մեկի վրա առանձին-առանձին, նշելով, թե ինչն էր ամենաէականը յուրաքանչյուրի խոսքի մեջ», – հիշում էր Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը⁷³:

Նշված միջոցառումից 10 տարի անց՝ 1984-ին, Հայաստանում լայնորեն նշվեց Արամ Խաչատրյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը: Կես տարվա ընթացքում հանրապետության ողջ տարածքում տեղի ունեցան նշանակալի իրադարձությունը կարևորող համերգներ, հանդիսավոր նիստեր: Հանդիսությունների եզրափակիչ ակորդը դարձավ երաժշտական արվեստի տոնը, որը կայացավ Երևանում 1984թ. հունվարի 23-25-ը⁷⁴: Հունվարի 23-ին ՀՍՍՀ ԳԱ դահլիճում գումարվեց գիտական նստաշրջան՝ կազմակերպված Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության, Հայաստանի կոմպոզիտորների միության, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կողմից: Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը: Զեկուցումներով հանդես եկան Մարգարիտ Հարությունյանը՝ «Ա. Խաչատրյանն իր նամակների լույսի ներքո», Գեորգի Տիգրանովը՝ «Ա. Խաչատրյանը և արդիականությունը», Նիկողոս Թահմիզյանը՝ «Ա. Խաչատրյանի երաժշտական աշխարհի ազգային տարրերը», Գայանե Չեքոտարյանը՝ «Ա. Խաչատրյանը և ժամանակակից պոլիֆոնիայի պրոբլեմները», Մարգարիտա Ռուֆսկյանը՝ «Ա. Խաչատրյանի մանկավարժական սկզբունքները» և այլք⁷⁵: Հայկական առաջին սիմֆոնիայի, բալետի և գործիքային կոնցերտի հեղինակ, աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովը կայացավ 1993թ. հունիսի 3-4-ը Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, Կոմիտասի ան-

վան պետական կոնսերվատորիայի, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության համագործակցության շնորհիվ: 13 զեկուցումները նվիրված էին միայն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի արվեստին. Մարգարիտա Ռուֆսկյանը ներկայացրեց «Ձևակառուցման գաղափարը Արամ Խաչատրյանի ստեղծագործության մեջ» զեկուցումը, Էդվարդ Փաշինյանը՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործության լադահարմոնիկ առանձնահատկությունները», Արաքսյա Սարյանը՝ «Մարտիրոս Սարյան և Արամ Խաչատրյան» և այլք:

Հայ երաժշտագիտության համար առանձնացավ նաև 1987 թվականը, երբ Հայաստանում հանդիսավորությամբ տոնվեց հայ երաժշտության դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ **Տիգրան Չուխաճյանի** ծննդյան 150-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան նշված տարվա ապրիլին գումարեցին գիտական նստաշրջան, որտեղ զեկուցումներով հանդես եկան Կարինե Խուդաբաշյանը՝ «Արշակ Երկրորդ» օպերայի ժանրային բնորոշումը», Մարգարիտա Տեր-Սիմոնյանը՝ «Տ. Չուխաճյանի կամերային-գործիքային ստեղծագործությունը», Նիկողոս Թահմիզյանը՝ «Տ. Չուխաճյանի ստեղծագործական գործունեությունը որպես հայերի ազգային-ազատագրական պայքարի խորհրդանիշ» և այլ երաժշտագետներ: Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում կայացավ հոբելյանական երեկո. բացման խոսքով հանդես եկավ արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Նիկողոս Թահմիզյանը, իսկ կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցմամբ՝ Է. Հովհաննիսյանը⁷⁶:

2014 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ կազմակերպեց «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը» խորագրով

⁷³ **Զարյան Ռ.**, Հուշապատում, գիրք 3, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1981, էջ 303, 304:

⁷⁴ **Ասափրյան Ա.**, Արամ Խաչատրյանը և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, էջ 31:

⁷⁵ **Ասափրյան Ա.**, Հայաստանի կոմպոզիտորների միություն-85, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 53:

⁷⁶ Նույն տեղում, էջ 71:

գիտական նստաշրջանը⁷⁷: Հանճարեղ կոմպոզիտորին նվիրված գիտաժողովի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Չուխաճյանի ստեղծագործությունը և որոշարկել նրա տեղն ու դերը ինչպես հայկական և թուրքական, այնպես էլ համաարևելյան երաժշտական մշակույթի անդաստանում⁷⁸: Ներկայացված 15 զեկուցումները բացառապես նվիրված էին կոմպոզիտորի արվեստին: «Տ. Չուխաճյանը իր կյանքի օրոք արդեն համաեվրոպական երևույթ էր, հիմնադիրը մերձավորարևելյան երաժշտական թատրոնի...», – նկատեց չուխաճյանագետ, երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը⁷⁹:

2002 թ. նոյեմբերի 11-ին Արվեստի ինստիտուտը կազմակերպեց **Կոնստանդին Սարաջյանի** ծննդյան 125-ամյակին և կոմպոզիտոր, երաժշտագետ-ֆոլկլորագետ, հասարակական գործիչ **Արամ Քոչարյանի** ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովները, վերջինս տեղի ունեցավ 2003թ. նոյեմբերի 13-ին⁸⁰: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ Գևորգ Գյոդակյանն իր խոսքում նշել է. «Արամ Քոչարյանը վառ անհատականություն էր: Նա մեր լավագույն մասնագետն էր ազգային նվագարանների, գուսան-աշուղական արվեստի ուսումնասիրման բնագավառում, նրա կազմած գուսան-աշուղական երգերի ժողովածուն վաղուց

դարձել է բոլոր մասնագետների սեղանի գիրքը»⁸¹: Ի դեպ, Ա.Քոչարյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի շրջանակներում Արվեստի ինստիտուտի ծայնադարանը անվանակոչվեց Արամ Քոչարյանի անունով:

2007թ. մայիսի 16-ին հանդիսավորությամբ տոնվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակը: Կազմակերպվեց գիտաժողով՝ նվիրված նշանավոր հոբելյանին, որի նախաձեռնողն էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը⁸²:

2012թ. մայիսի 17-ին գումարվեց գիտական նստաշրջան՝ նվիրված ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ականավոր կոմպոզիտոր և տաղանդավոր դաշնակահար **Առնո Բաբաջանյանի** ծննդյան 90-ամյակին, որի ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտնականների զեկուցումներում ներկայացվեց կոմպոզիտորի բազմաժանր ստեղծագործությունը⁸³:

Իսկ 2012թ. հունիսի 21-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը գումարեց գիտական նստաշրջան՝ նվիրված **Սայաթ-Նովայի** ծննդյան 300-ամյա հոբելյանին⁸⁴, որի ընթացքում ՀՀ ԳԱԱ արվես-

⁷⁷ Տե՛ս Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը (նստաշրջանի նյութեր, Երևան, 12 դեկտեմբերի, 2014), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 208 էջ:

⁷⁸ **Ասատրյան Ա.**, Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը, «Գիտություն», Երևան, 2015, հունվար N 1 (278), էջ 6: **Սանթրյան Վ.**, Տիգրան Չուխաճյանի ժամանակը. Մեծանուն հայ կոմպոզիտորի ստեղծագործությանը նվիրված գիտական նստաշրջան Երևանում, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2014, 13 դեկտեմբերի:

⁷⁹ **Ասատրյան Ա.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությանը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2015, 1 (198), էջ 315: Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը (նստաշրջանի նյութեր, Երևան, 12 դեկտեմբերի, 2014), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 208 էջ:

⁸⁰ Արամ Քոչարյան (ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, նոյեմբերի 13, 2003), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 61 էջ:

⁸¹ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 196: **Գյոդակյան Գ.**, Խոսք Արամ Քոչարյանի մասին, Արամ Քոչարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, էջ 7:

⁸² **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 197, **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ հուշամեղալը՝ Հովհաննես Չեքիջյանին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, 3 (620), էջ 268-271, **Կուրեխյան Լ.**, Երգչախմբային գիտաժողով, «Առավոտ», 17 մայիսի, 2007:

⁸³ **Ավագիմովա Ի.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Առնո Բաբաջանյանի ծննդյան 90-ամյակին, «Կրթություն», Երևան, 2012, մայիսի 23: **Սանթրյան Վ.**, Նա հայկական էստրադայից դուրս մղեց դիլետանտիզմը. գիտական նստաշրջան՝ Առնո Բաբաջանյանի 90-ամյակին, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2012, 18 մայիսի, էջ 5:

⁸⁴ Սայաթ-Նովա-300, Հոբելյանական գիտական նստաշրջան՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին (զեկուցումների ժողովածու, Երևան, 21 հունիսի, 2012), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 194 էջ:

տի ինստիտուտի, Մ.Աբեղյանի անվան գրականության, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գիտնականների զեկուցումներում ներկայացվեց աշուղի գրական և երաժշտական ժառանգությունը⁸⁵:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն անդրադարձել է ոչ միայն հայ կոմպոզիտորական, այլև կատարողական արվեստի ականավոր դեմքերին: 2014թ. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր պրոֆեսոր **Հովհաննես Չեքիջյանը** բոլորեց ծննդյան 85-ամյակը⁸⁶: Այդ կապակցությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ սեպտեմբերի 26-27-ը գումարեց Հ.Չեքիջյանին նվիրված անդրանիկ գիտական նստաշրջանը, որի 18 զեկուցումներում բազմակողմանիորեն ուսումնասիրվեց դիրիժորի կատարողական ու ստեղծագործական գործունեությունը⁸⁷: Ընդ որում հատուկ կարևորվեց նստաշրջանի աշխատանք-

⁸⁵ **Սանթրյան Վ.**, Իր ապրած ժամանակի ու միջավայրի մեկնաբանը. Սայաթ-Նովայի հոբելյանը նշվեց Գիտությունների ազգային ակադեմիայում, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2012, հունիսի 22, էջ 6: **Քամայան Մ.**, Սայաթ-Նովա-300, «Գիտություն», Երևան, 2012, N 7-8 (249), էջ 1, 2: **Քամայան Մ.**, Սայաթ-Նովայի 300-ամյա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջան, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, 2 (190), էջ 296-299: **Թովմասյան Վ.**, Սայաթ-Նովա-300. 300-ամյա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջան, «Երաժիշտ», Երևան, 2012, N 7-8, հուլիս-օգոստոս, էջ 1, 2: Առաջաբանի փոխարեն, Սայաթ-Նովա-300, Հոբելյանական գիտական նստաշրջան՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին, էջ 5, 6:

⁸⁶ Հովհաննես Չեքիջյան-85, գիտական նստաշրջան նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին (նստաշրջանի նյութեր, Երևան-Արզական, 26-27 սեպտեմբերի, 2014), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 179 էջ:

⁸⁷ **Կիրակոսյան Մ.**, Գիտական նստաշրջան նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին, Հովհաննես Չեքիջյան-85, գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին (նստաշրջանի նյութեր), Երևան, «Գիտություն» հրատ., 2014, էջ 5: Գիտական նստաշրջանի մասին նաև տե՛ս **Սանթրյան Վ.**, Աշխարհին լսելի դարձնելով մեծն Կոմիտասին.

ներին երիտասարդ երաժշտագետների ու արվեստաբանների մասնակցությունը, որոնցից շատերը Մաեստրոյի հետ անձնապես ծանոթացան հենց այս առիթով⁸⁸:

Իսկ 2019 թ. հուլիսի 12-13-ը կրկին Արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի հետ համատեղ կայացավ ՀՀ ազգային հերոս, Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը: Գիտաժողովի բացումը և լիագումար նիստը տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական): Գիտական նստաշրջանի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը⁸⁹: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գիտնականները և դասախոսները: Ընթերցվեց 13 զեկուցում՝ (Աննա Ասատրյան՝ «Հովհաննես Չեքիջյանի ներդրումը հայ երաժրշտարվեստում», Մարգարիտա Ռուխկյան՝ «Մշակութային ավանդույթների զարգացումը՝ ազգային ինքնության պատվար», Անահիտ Բաղդասարյան՝ «Հոգևոր երաժշտությունը Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի կատարողական արվեստում», Լուսինե Սահակյան՝ «Կոմիտասի խմբերգերը չեքիջյանական մեկնաբանու-

Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2014, 27 սեպտեմբերի: **Արտեմյան Լ.**, Հովհաննես Չեքիջյան-85, «Գիտություն», 2014, 25 հոկտեմբերի, 10 (275), էջ 2: **Արտեմյան Լ.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի 85-ամյա հոբելյանին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2014, 3 (197), էջ 276-282:

⁸⁸ **Կիրակոսյան Մ.**, Գիտական նստաշրջան նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին, էջ 5:

⁸⁹ Տե՛ս **Ասատրյան Ա.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի գործունեության ուսումնասիրությանը, «Գիտություն», Երևան, 2019, հուլիս-օգոստոս, N 7-8 (332), էջ 1:

թամբ», Նազենիկ Սարգսյան՝ «Հովհաննես Չեքիջյանի գործունեությունը Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում», Հովհաննես Մանուկյան՝ «Կառլ Օրֆի “Carmina Burana” կանտատի չեքիջյանական մեկնաբանության առանձնահատկությունները», Մարիաննա Տիգրանյան՝ «Հովհաննես Չեքիջյան. մոսկովյան հյուրախաղեր», Մարգարիտա Քամալյան՝ «Հովհաննես Չեքիջյանը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» և այլք: Նստաշրջանի ավարտին կապելլայի արտիստների փոքրաթիվ խմբի կատարմամբ հնչեց Մակար Եկմալյանի «Ով, հայոց աշխարհ» ակապելլա խմբերգը⁹⁰:

Ինչպես տեսանք, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հայ երաժշտագիտության կենտրոնն է, և ինստիտուտի երաժշտագետներն աչքի են ընկնում գիտական ակտիվ գործունեությամբ, արդյունավետ աշխատանքով, ինչի վկայությունն է վերևում նշված գիտաժողովներին նրանց ներգրավվածության հանգամանքը:

Նշանակալից են Արվեստի ինստիտուտի կազմակերպած՝ անվանի ճարտարապետների հոբելյաններին նվիրված գիտական նստաշրջանները ևս: Այսպես, ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի համագործակցությամբ 1971թ. գումարվեց գիտական նստաշրջան՝ նվիրված հայ նշանավոր ճարտարապետ, ճարտարապետության տեսաբան **Թորոս Թորամանյանի** հիշատակին⁹¹: Նստաշրջանում ընթերցված 14 զեկուցումները նվիրված էին անվանի ճարտարապետի վաստակի ուսումնասիրությանն ու արժևորմանը:

1984թ. նշվեց ականավոր ճարտարապետի ծննդյան 120-ամյա հոբելյանը: Այդ առիթով հոկտեմբերի 22-25-ը կայացավ հանրապետական գիտական նստաշրջան, որի կազմակերպիչներն էին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչությունը⁹²: Կարդացված 29 զե-

⁹⁰ Նույն տեղում, էջ 4:

⁹¹ Թորոս Թորամանյանի հիշատակին նվիրված նստաշրջան (զեկուցումների թեզիսներ, Երևան, 1971), Երևան, 1971, 37 էջ:

⁹² Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված Թորոս Թորամանյանի ծննդյան 120-ամյակին (զեկուցումների թեզեր, Երևան-Լենինական, 22-25 հոկ-

կուցումների շարքում առանձնացան Թորամանյանին նվիրված բանախոսությունները (Յ.Բոչարով՝ «Թորամանյանի ստեղծագործության նշանակությունը հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում», Վ. Հարությունյան՝ «Թորոս Թորամանյանի գիտական սխրանքը», Ա.Թորամանյան՝ «Թ.Թորամանյանի և Հայաստանի միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության մի քանի հարցեր» և այլք): Արտերկրից հրավիրված 7 մասնակիցները ներկայացնում էին Մոսկվայի, Բաքվի, Լվովի, Կիևի, Լենինգրադի գիտական հաստատությունները:

2010 թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ գումարվեց միջնադարի հայ հանճարեղ ճարտարապետ, քանդակագործ, մանրանկարիչ **Մոմիկի** ծննդյան 750-ամյակին նվիրված գիտաժողովը⁹³: Բանախոսություններով հանդես եկան գիտնականներ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Մ.Մաշտոցի անվան Մատենադարանից և Երևանի պետական համալսարանից, ովքեր իրենց զեկուցումներում ներկայացրին արվեստագետի բազմաժանր գործունեությունը՝ իր բոլոր բնագավառներով⁹⁴:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը գիտական միջոցառումների կազմակերպմամբ հանդիսավորությամբ նշել է ինստիտուտի տնօրենների ծննդյան հոբելյանները⁹⁵:

տեմբերի, 1984), 1984, 136 էջ:

⁹³ Մոմիկ-750, Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին (զեկուցումների ժողովածու, Երևան, 15 հոկտեմբերի, 2010), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 83 էջ:

⁹⁴ Մոմիկի ծննդյան 750-ամյակին նվիրված գիտաժողովի մասին տե՛ս **Սանթրոյան Վ.**, Ե՛րբ է ծնվել Մոմիկը: Գիտական նստաշրջան՝ նվիրված միջնադարյան հայ մեծ վարպետի ծննդյան 750-ամյակին, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2010, 16 հոկտեմբերի, էջ 5: **Ասադրյան Ա.**, Մոմիկի ծննդյան 750-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողով, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2010, 3 (185), էջ 309, 310: **Ասադրյան Ա.**, Մոմիկ-750, «Գիտություն», Երևան, 2010, N 10 (228), հոկտեմբեր, էջ 1:

⁹⁵ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն (2003-առ այսօր), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի ծննդյան 60-ամյա հոբելյանի առիթով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի

Այսպես, 1999թ. սեպտեմբերի 14-16-ին կազմակերպվեց ինստիտուտի առաջին տնօրեն Ռուբեն Զարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովը⁹⁶, որի ընթացքում ներկայացվեց 23 զեկուցում: Ռ.Զարյանին նվիրված խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը, ակադեմիկոսներ Սիլվա Կապուտիկյանը և Գրիգոր Խանջյանը:

Իսկ Ռուբեն Զարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը տեղի ունեցավ 2010թ. հոկտեմբերի 21-22-ը: Ռ.Զարյանի մասին խոսք ասացին արձակագիր Պերճ Զեյթունցյանը, ակադեմիկոս Սեն Արևշատյանը, իսկ պրոֆեսոր Գրիգոր Օրդոյանը փոխանցեց Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի երախտագիտության խոսքը, Վահե Սամվելյանը (Սիրիա)՝ Հալեպում գործող «Աղամյան» թատրոնի շնորհավորանքը⁹⁷: Ինչպես 90-ամյակին նվիրված, այնպես էլ Ռ.Զարյանի 100-ամյակին ձոնված գիտաժողովի թեման ազատ էր⁹⁸:

2004թ. նոյեմբերի 2-4-ը կայացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երկարամյա տնօրեն (1987-2003),

տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատըրյանի նախաձեռնությամբ 2016թ. հրատարակվեց ժողովածու՝ պրոֆեսորի կենսամատենագիտության, գիտական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկով և գիտական վաստակը ներկայացնող և արժևորող հոդվածներով, տե՛ս **Արարատ Աղասյան-60** (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 176 էջ:

⁹⁶ Ակադեմիկոս Ռուբեն Զարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով (զեկուցումների թեզիսներ, Երևան, 14-16 սեպտեմբերի, 1999), 46 էջ:

⁹⁷ **Սանթրյան Վ.**, «Ստեղծագործողի տարիները աշուններ չունեն» Ազգային ակադեմիայում նշվեց Ռուբեն Զարյանի 100-ամյակը, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2010, 22 հոկտեմբերի, էջ 7:

⁹⁸ Արվեստի ինստիտուտի առաջին տնօրեն, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր ակադեմիկոս Ռուբեն Զարյանի (1909-1994) ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական երկօրյա գիտաժողովում կարդացված զեկուցումներից շատերը հրատարակվել են «Հայ արվեստի հարցեր» գիտական ժողովածուում. տե՛ս «Հայ արվեստի հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 298 էջ:

Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանը, կրկին առանց թեմատիկ սահմանափակման⁹⁹: Լ.Հախվերդյանի մասին ելույթով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանը և այլք: Հոբելյանական գիտաժողովն իր աշխատանքը ծավալեց երկու մասնաճյուղով (1.ճարտարապետություն և կերպարվեստ, 2.երաժշտություն, թատրոն և կինո): Ճարտարապետության և կերպարվեստի մասնաճյուղում գումարված նիստերում տրվեցին զեկուցումներ՝ նվիրված ճարտարապետության և կերպարվեստի պատմության և տեսության խնդիրներին: Երաժշտության, թատրոնի և կինոյի մասնաճյուղի երեք նիստերում լսվեցին 22 զեկուցում: Երաժշտության ենթամասնաճյուղում ընթերցված զեկուցումները ներկայացրին ինչպես պատմական և տեսական երաժշտագիտության, այնպես էլ երաժշտական միջնադարագիտության և ֆոլկլորագիտության հրատապ խնդիրները, թեմատիկ և ժամանակագրական լայն ընդգրկում ունեին նաև թատրոնի և կինոյի ենթամասնաճյուղերում ընդգրկված զեկուցումները¹⁰⁰:

Նշված միջոցառումից ճիշտ 10 տարի անց՝ 2014թ. դեկտեմբերի 19-ին, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ գումարվեց Լևոն Հախվերդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը¹⁰¹: Կերպարվեստի, ճարտարապետության, երաժշտության և թատրոնի խնդիրները շոշափող շուրջ 20 զեկու-

⁹⁹ Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողով (հիմնադրույթներ, Երևան, 2-4 նոյեմբերի, 2004), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 87 էջ:

¹⁰⁰ **Ասատրյան Ա., Ավագյան Ա.**, Գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2005, 1 (643), էջ 234-236:

¹⁰¹ **Արտեմյան Լ.**, Լևոն Հախվերդյան, «Գիտություն», Երևան, 2015, N 1 (278), էջ 3: **Արտեմյան Լ.**, Լևոն Հախվերդյան – 90, Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 3-5:

ցումներից բացի, ընթերցվեցին 2 բանախոսություն՝ նվիրված Լ.Հախվերդյանին՝ Աննա Ասատրյան՝ «Լևոն Հախվերդյանը և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը» և Հենրիկ Հովհաննիսյան՝ «Լևոն Հախվերդյան. գրականությունից թատրոն և թատրոնից գրականություն»¹⁰²:

Այժմ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի իրականացրած թատերագիտական գիտաժողովների մասին: 1963թ. ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը Հայկական թատերական ընկերության հետ կազմակերպեց գիտական սեսիա՝ նվիրված Գ.Սունդուկյանի անվան պետական թատրոնի 40-ամյակին և Կ.Ստանիսլավսկու ծննդյան 100-ամյակին¹⁰³: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Հայաստանի թատերական գործիչների միության և Երևանի թատերական և կինոարվեստի պետական ինստիտուտի համագործակցությամբ 1999թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Պետրոս Ադամյանի ծննդյան 150-ամյակին, որի ընթացքում Արվեստի ինստիտուտի գիտաշխատակիցներ Հենրիկ Հովհաննիսյանը ներկայացրեց «Ադամյանի խաղային մանրամասները և ոճի խնդիրը» բանախոսությունը, Վիգեն Ղազարյանը՝ «Ադամյանի որպես նկարչի և բանաստեղծի գնահատման փորձ», Ռուզան Մարգունին՝ «Ադամյանի Համլետը»¹⁰⁴:

Անվանի թատերական գործիչ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վարդան Աճեմյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովը կայացավ 2005թ. հոկտեմբերի 24-ին¹⁰⁵:

Արվեստի ինստիտուտի կազմակերպած հորեյանական գիտաժողովների շարքում աչքի են ընկնում նաև կերպարվեստի պատմության և տեսության հարցերին, հայ անվանի արվեստագետների, մշակութային գործիչների կյանքին և վաստակին անդ-

րադարձող միջոցառումները: 1960-ին գումարվեց գիտական սեսիա՝ նվիրված **Վարդգես Սուրենյանցի** ծննդյան 100-ամյակին¹⁰⁶:

2010թ. նոյեմբերի 10-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը կազմակերպեց մեկ այլ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ մեծանուն գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին¹⁰⁷: Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին բանախոսներ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Հայաստանի ազգային պատկերասրահից, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտից, Գևորգ Գրիգորյանի (Ջիոտտո) թանգարանից, Երևանի պետական համալսարանից, ովքեր նորովի մեկնաբանեցին Սուրենյանցի մեծարժեք գեղարվեստական ժառանգությունը¹⁰⁸:

1996-ին լրացավ վաստակաշատ գիտնական, արվեստի պատմաբան, գեղարվեստի քննադատ, Հայաստանի կերպարվեստի թանգարանի (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) առաջին տնօրեն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի սեկտորի վարիչ (1958-1962), կիրառական արվեստի սեկտորի վարիչ (1962-1965) **Ռուբեն Դրամբյանի** ծննդյան 105-ամյակը: Հայաստանի ազգային պատկերասրահի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համագործակցությամբ նույն տարվա հուլիսին կազմակերպվեց հորեյանական գիտաժողով¹⁰⁹: Ներկայացված 27 զեկու-

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 64:

¹⁰⁷ Վարդգես Սուրենյանց-150, հորեյանական գիտաժողով՝ նվիրված Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին (զեկուցումների ժողովածու, Երևան, 16 նոյեմբերի, 2010), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 22 էջ:

¹⁰⁸ Առաջաբանի փոխարեն, Վարդգես Սուրենյանց-150 (Հորեյանական գիտաժողով՝ նվիրված Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին, զեկուցումների ժողովածու, 16 նոյեմբերի, 2010), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 4: **Մկրտչյան Մ.**, Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյա հորեյանին նվիրված գիտաժողով, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2010, 3 (185), էջ 315,316: **Մկրտչյան Մ.**, Վարդգես Սուրենյանց-150, «Գիտություն», Երևան, 2010, N 11 (228), նոյեմբեր, էջ 1: **Սանթրյան Վ.**, Վարդգես Սուրենյանցի տարին է. գիտաժողով ազգային ակադեմիայում, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2010, 17 նոյեմբերի, էջ 4:

¹⁰⁹ Ռուբեն Դրամբյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզեր (Երևան, հուլիս, 1996), Երևան, 1996, 45 էջ:

¹⁰² Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջան (նստաշրջանի նյութեր, Երևան, 19 դեկտեմբերի, 2014), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 245 էջ:

¹⁰³ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 64:

¹⁰⁴ Պետրոս Ադամյան-150, գիտաժողովի ծրագիր, Երևան, դեկտեմբերի 10, 1999:

¹⁰⁵ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 196:

ցումներում արծարծվեցին ինչպես հայ միջնադարյան, XIX-XX դդ. Հայկական արվեստի, Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուներին առնչվող հարցերը, այնպես էլ քննության առնվեցին Ռ.Դրամբյանի թանգարանագիտական գործունեությունն ու արվեստաբանական ժառանգությունը: Իսկ արդեն 2016 թվականին տոնվեց Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյակը¹¹⁰: Հոբելյանական միջոցառումների շրջանակում ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի ազգային պատկերասրահի նախաձեռնությամբ հոկտեմբերի 5-6-ը գումարվեց գիտաժողով՝ նվիրված Ռ. Դրամբյանի ծննդյան 125-ամյա հոբելյանին: Երկօրյա գիտաժողովի չորս նիստերի ընթացքում լսվեց 17 զեկուցում, որոնցից 8-ը նվիրված էին հենց Ռ.Դրամբյանի գործունեության ուսումնասիրությանը: Գիտաժողովի շրջանակում ՀԱՊ որմնանկարների դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը՝ ՀՀ վաստակավոր արտիստ Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ, որի ընթացքում հնչեցին Կոմիտասի և Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները¹¹¹:

Հայկական միջնադարյան կերպարվեստի հուշարձանների գիտական ուսումնասիրության և պահպանման գործում խոշոր ավանդ ունեցած, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստաբան **Լիդիա Դուռնովյի** մահվան 10-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը կայացավ 1973-ի հունիսի 5-6-ը Արվեստի ինստիտուտի և Մատենադարանի համագործակցությամբ: Ականավոր արվեստաբանի կյանքին ու գործունեությանը վերաբերող զեկուցմամբ հանդես եկավ Ռ.Դրամբյանը, իսկ Դուռնովյի աշխատանքներում հատուկ տեղ գրաված՝ գեղարվեստական լեզվի արտահայտչականության հարցերին նվիրվեց Ն.Քոթանջյանի բանախոսությունը: Նստաշրջանի աշխատանքներին

¹¹⁰ Ռուբեն Դրամբյան. գիտաժողով՝ նվիրված Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր տնօրեն Ռ.Դրամբյանի ծննդյան 125-ամյակին (զեկուցումների ժողովածու, Երևան, 5-6 հոկտեմբերի, 2016), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 204 էջ:

¹¹¹ **Ասատրյան Ա.**, Գիտաժողով՝ նվիրված Ռ. Դրամբյանի հոբելյանին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2017, 1 (649), էջ 322, 323, 325:

մասնակցեցին Լենինգրադից հրավիրված գիտնականներ՝ արվեստագիտության դոկտոր Տ.Իզմայլովան և ճարտարապետության դոկտոր Ա.Յակոբսոնը¹¹²:

Ճիշտ 28 տարի անց՝ 2001թ. հուլիսի 12-ին, Արվեստի ինստիտուտը կազմակերպեց գիտաժողով՝ նվիրված հայ միջնադարյան արվեստի խոշորագույն պատմաբան Լիդիա Դուռնովյի ծննդյան 115-ամյակին¹¹³:

XX դարի հայ կերպարվեստի ազգային դպրոցի հիմնադիր, Արվեստների պատմության և տեսության սեկտորի վարիչ (1949-1951), ակադեմիկոս **Մարտիրոս Սարյանի** ծննդյան 125-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը տեղի ունեցավ 2005թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԳԱԱ-ի նիստերի դահլիճում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի համագործակցության շնորհիվ¹¹⁴: Մեկ տասնյակ զեկուցումները բացառապես նվիրված էին Մարտիրոս Սարյանի արվեստին, նրա ստեղծագործությունների արժևորմանը և հետազոտմանը: Ներկայացվեցին Արարատ Աղասյանի «Ազգայինը Մարտիրոս Սարյանի արվեստում», Վարազդատ Հարությունյանի «Մարտիրոս Սարյանի գործունեության մեկ բնագավառը», Վիգեն Ղազարյանի «Մարտիրոս Սարյանը և միջնադարը», Ռուզան Սարյանի «Մարտիրոս Սարյանը և Ռուսաստանը» և այլն:

2006թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, Հայաստանի ազգային պատ-

¹¹² **Հակոբյան Հ.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Լ.Ա. Դուռնովյի հիշատակին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1973, 2 (61), էջ 317:

¹¹³ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 196:

¹¹⁴ Մարտիրոս Սարյան-125 (գիտաժողովի ծրագիր, Երևան, 19 դեկտեմբերի, 2005): Գիտաժողովի մասին մանրամասն տե՛ս **Սարյան Ռ.**, Մարտիրոս Սարյանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտաժողով, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2005, 3 (170), էջ 304,305: **Սարյան Ռ.**, Մարտիրոս Սարյանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտաժողով, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2005, 3 (170), էջ 304,305, **Գրիգորյան Կ.**, Փարիզ չչտապող Սարյանը, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2005, 20 դեկտեմբերի, էջ 5: **Հարությունյան Տ.**, Սարյանին լավ չեն մեծարում. կարծում է նկարչի աշակերտը, «Առավոտ», Երևան, 2005, 20 դեկտեմբերի, էջ 6:

կերասրահի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համագործակցությամբ իրականացավ նոր շրջանի ազգային կերպարվեստի հիմնադիր, գեղանկարիչ **Հակոբ Հովնաթանյանի** ծննդյան 200-ամյակին նվիրված «Անցում միջնադարից նոր ժամանակ» խորագիրը կրող գիտական նստաշրջանը¹¹⁵։ Ներկայացվեցին Հովնաթանյանի արվեստին և ընդհանրապես XIX դարի առաջին կեսի հայ գեղարվեստական մշակույթի ձևավորման խնդիրներին անդրադարձող զեկուցումներ։

2010թ. մարտի 9-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Հայոց ցեղասպանության ակադեմիայի հետ համատեղ կազմակերպվեց սիմպոզիում՝ նվիրված մեծանուն գեղանկարիչ **Ժանսեմի** ծննդյան 90-ամյակին¹¹⁶։

2017 թվականին լրացավ հայ մեծ ծովանկարիչ **Հովհաննես Այվազովսկու** ծննդյան 200-ամյա հոբելյանը։ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ 2017 թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցավ «Հովհաննես Այվազովսկի-200» գիտական նստաշրջանը¹¹⁷։ Հայ իրականության մեջ առաջին անգամ մի ամբողջ գիտական նստաշրջանում 15 զեկուցում նվիրվեց բացառապես մեծ ծովանկարչի կյանքի և ստեղծագործության հետազոտմանը¹¹⁸։ Իհարկե, Հ.Այվազովսկու մասին գրվել է ծով գրականություն, բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն գիտական նստաշրջանում եղան հայտնություններ, նորություններ¹¹⁹։

¹¹⁵ Հակոբ Հովնաթանյան, Անցում միջնադարից նոր ժամանակ, գիտաժողով՝ նվիրված ծննդյան 200-ամյակին (զեկուցումների ժողովածու, Երևան, 29 դեկտեմբերի, 2006), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, 68 էջ։

¹¹⁶ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, էջ 197, Ժանսեմ-90, Երևան, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հրատարակություն, 2010, 32 էջ։

¹¹⁷ Հովհաննես Այվազովսկի-200 (գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 3 նոյեմբերի, 2017), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 163 էջ։

¹¹⁸ **Ասատրյան Ա., Սարգսյան Ա.**, Ծովային տարերքի հզոր արքան և ծովի կրակոտ բանաստեղծը. Հովհաննես Այվազովսկի, Հովհաննես Այվազովսկի-200 (գիտական նստաշրջանի նյութեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 3։

¹¹⁹ **Ասատրյան Ա., Սարգսյան Ա.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհան-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանի պաշտոնավարման օրոք (2003-ից առ այսօր) ինստիտուտում հետևողական աշխատանքներ են տարվում գիտական անձնակազմի երիտասարդացման և սերնդափոխության ապահովման ուղղությամբ։ Ինստիտուտի տնօրինության նախաձեռնությամբ 2004թ. նոյեմբերին հիմնարկվեց Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը, որի ստեղծման իր հորդորներով և զորակցությամբ աջակցել է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական երջանկահիշատակ Վլադիմիր Բարխուդարյանը։ Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը ձևավորվել է ինստիտուտի տարբեր ստորաբաժանումների երիտասարդ գիտաշխատողներից, ասպիրանտներից և հայցորդներից (այդ թվում՝ հրավիրված անդամներ ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախներից)։

2005 թ. նոյեմբերի 16-17-ը ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և մշակութային այլ օջախների երիտասարդ գիտնականների մասնակցությամբ գումարվեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական առաջին նստաշրջանը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի 10-ամյա հոբելյանին։ Հայրենական արվեստաբանության կյանքում այս նախընթաց ձեռնարկը համախմբեց արվեստի բոլոր ուսումնական հաստատությունների, հայագիտական

նես Այվազովսկու ծննդյան 200-ամյա հոբելյանին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2017, 3 (206), էջ 317։ **Աղասյան Ա.**, Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 88 էջ։ Գիտական նստաշրջանի մասին նաև տե՛ս **Ասատրյան Ա.**, Հայ գեղանկարչության համաշխարհային գագաթը, «Կրթություն», Երևան, 2017, 8 նոյեմբերի, թիվ 45 (810), էջ 1,7,11։ **Ասատրյան Ա.**, Հովհաննես Այվազովսկի-200, «Գիտություն», Երևան, նոյեմբեր N 11 (311), էջ 1-2։

կենտրոնների 38 երիտասարդ հայագետ-արվեստաբաններին¹²⁰:

Երիտասարդ հայ արվեստաբանների արդեն ավանդական դարձած երկրորդ գիտական նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին 13 երիտասարդ գիտնականներ Արվեստի ինստիտուտից, Սորբոնի համալսարանից (Փարիզ), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Հայաստանի ազգային պատկերասրահից, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից¹²¹: Շարունակական կերպով յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո լույս է տեսնում «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն»:

2008 թ. մայիսին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը տոնեց իր ծննդյան 50-ամյա հոբելյանը: Հարազատ ինստիտուտի կյանքում պանծալի իրադարձության կապակցությամբ նախատեսված հոբելյանական միջոցառումների շարքում իր արժանի տեղը զբաղեցրեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջանը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանին¹²²: 2009թ. դեկտեմբերի 22-ին գումարվեց Երիտասարդ արվեստաբանների չորրորդ նստաշրջանը՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 140-ամյակին¹²³: 2010 թվականի դեկտեմբերի 2-3-ը կազմակերպվեց Երիտասարդ արվեստաբանների հինգերորդ

¹²⁰ Տե՛ս **Աղասյան Ա.**, Առաջաբանի փոխարեն, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական առաջին նստաշրջան՝ նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական 016 խորհրդի ստեղծման 10-ամյակին, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2005, էջ 3:

¹²¹ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երկրորդ նստաշրջան, Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հրատ., 2007, 96 էջ:

¹²² Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջան՝ նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 212 էջ:

¹²³ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական չորրորդ նստաշրջան՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 140-ամյա հոբելյանին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 264 էջ:

նստաշրջանը¹²⁴, 2011թ. նոյեմբերի 26-27-ին գումարվեց հերթական գիտական վեցերորդ նստաշրջանը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին¹²⁵:

2014թ. Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը բոլորեց իր հիմնադրման առաջին տասնամյակը¹²⁶: Նույն տարվա նոյեմբերի 14-ին Երևանում կայացավ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանը¹²⁷:

2015թ. նոյեմբերի 10-11-ը գումարված Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանը նվիրվեց XIX-XX դարերի հայ իրապաշտական գեղանկարչության ակնառու արվեստագետ Փ.Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին¹²⁸:

¹²⁴ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջանը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 314 էջ, **Քամայան Մ., Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջանը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2011, 1 (186), էջ 355-358:

¹²⁵ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջանը՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 215 էջ: **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջան, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, 1 (189), էջ 282-285: **Քամայան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2012, 1 (633), էջ 368-372:

¹²⁶ Խորհրդի 10-ամյա հոբելյանի մասին տե՛ս **Քալոյան Հ.**, Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը 10 տարեկան է, «Կրթություն», Երևան, 2014, 7 մայիսի, թիվ 21-22 (630-631), էջ 6:

¹²⁷ Տե՛ս **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 5-10: **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2015, 1 (643), էջ 408-412: **Սանթրոյան Վ.**, Վստահ քայլեր արվեստի ճամփաներին. Երիտասարդ հայ արվեստաբանների 9-րդ գիտական նստաշրջանից, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2014, 15 նոյեմբերի, էջ 5: **Քալոյան Հ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների իններորդ գիտական նստաշրջան, «Կրթություն», Երևան, 2014, 17 դեկտեմբերի, թիվ 52 (661), էջ 11:

¹²⁸ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի մասին տե՛ս **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտա-

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ 2017 թ. նոյեմբերի 22-23-ը Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջանը՝ նվիրված մեծահամբավ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Երիտասարդ արվեստաբաններ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Իրանի Իսլամական Հանրապետությունից և ՀՀ այլ գիտակրթական օջախներից: Երկօրյա նստաշրջանի չորս նիստերի ընթացքում ընթերցված 34 զեկուցումներում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր. կերպարվեստագիտություն, երաժշտագիտություն, ճարտարապետության պատմություն և կինոգիտություն¹²⁹:

Երիտասարդ գիտնականների համար հատկապես նշանակալից էր 2012 թվականը, երբ հուլիսի 1-ից մեկնարկեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը (ԵԳԱԾ): ԵԳԱԾ-ը իր 5-ամյա գործունեության ժամանակահատվածում ֆինանսավորել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 3 գիտական նստաշրջանների կազմակերպումը: Անխոս, երիտասարդ գիտնականների

կան տասներորդ նստաշրջանը՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի նյութեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 5-10: **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանը՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2016, 1 (646), էջ 355-359: **Արսենյան Լ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանը՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2016, 1 (201) էջ 265-270: **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանը՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին, «Գիտություն», Երևան, 2016, N 1 (290), հունվար, էջ 5:

¹²⁹ **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջանը՝ նվիրված Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 5:

համար նախատեսված ՀՀ նախագահի ծրագիրը մեծապես նպաստեց երիտասարդ գիտաշխատողների առաջ ծառացած գիտական որոշ խնդիրների հաղթահարմանը և ազնիվ քայլ դարձավ երիտասարդներին աջակցելու, գիտական տարաբնույթ ծրագրեր կյանքի կոչելու տեսանկյունից:

ԵԳԱԾ-ի հովանու ներքո իրականացված Արվեստի ինստիտուտի անդրանիկ գիտաժողովը տեղի է ունեցել 2012թ. հոկտեմբերի 19-21-ը, որը նվիրված էր հայ դասական պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի սկզբնավորող, հայ երաժշտական դպրոցի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին¹³⁰: Գիտաժողովի բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը նկատեց. «Իր պատմության մեջ առաջին անգամ մեր նստաշրջանն, իր ընդգրկմամբ, միջազգային է, քանի որ նրա աշխատանքներին մասնակցում են երիտասարդ արվեստաբաններ ինչպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից ու ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախներից, այնպես էլ Մյունխենից, Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայից, Նովոսիբիրսկից, և Իրանի Իսլամական Հանրապետությունից»¹³¹:

¹³⁰ Տե՛ս **Ասադրյան Ա.**, Համերգ «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը», Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 15:

¹³¹ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 369 էջ: Նստաշրջանի մասին տե՛ս Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին, «Գիտություն», Երևան, 2012, N 12 (253), դեկտեմբեր, էջ 2: **Քամայան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, 3 (191), էջ 255-260, **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2012, 4 (636), էջ 295-300:

¹³¹ **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին //Երի-

Մեկ տարի անց, նույն ծրագրի շրջանակներում, 2013թ. նոյեմբերի 15-17-ը ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջանը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին¹³²: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ, Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում և ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ նստաշրջանը (2016թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը)՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյա հոբելյանին:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ գիտնականներ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտից և այլ հաստատություններից, նաև մասնակիցներ Ֆրանսիայից և Իրանի Իսլամական Հանրապետությունից:

2019թ. դեկտեմբերի 12-13-ը Արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի համագործակցությամբ իրականացրեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական XIV նստաշրջանը¹³³: Երկօրյա նստաշրջանի չորս նիստերի ընթացքում ըն-

տասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 6:

¹³² Նստաշրջանի աշխատանքների մասին տե՛ս մեր հետևյալ հոդվածը՝ **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջան՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2014, 1 (640), էջ 322-327:

¹³³ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնչորսերորդ նստաշրջանի մասին տե՛ս **Կիրակոսյան Մ.**, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնչորսերորդ նստաշրջանը, «Գիտություն», Երևան, 2020, հունվար, N 1 (337), էջ 4:

թերցվեցին 25 զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղերը՝ կերպարվեստագիտություն, երաժրշտագիտություն, ճարտարապետության պատմություն և տեսություն և կինոգիտություն: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ արվեստաբաններ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Հայաստանի ազգային արխիվից, Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից, նաև երկու մասնակից Իրանի Իսլամական Հանրապետությունից և մեկ մասնակից Լիբանանից:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների նստաշրջանների պատմության մեջ առաջին անգամ 2012-ից հիմք դրվեց նոր ավանդույթի ձևավորմանը՝ յուրաքանչյուր գիտական նստաշրջան ավարտել համերգով:

Այսպես, 2012 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը» համերգը, որի ընթացքում Հայաստանում առաջին անգամ գիտական աշխատանքով զբաղվող երիտասարդ երգիչների ու դաշնակահարների կատարմամբ ներկայացվեցին էջեր Տ. Չուխաճյանի կամերային ստեղծագործությունից, մեներգեր ու դաշնամուրային պիեսներ¹³⁴: Համերգը վարեց արվեստագիտության թեկնածու Աննա Ադամյանը:

Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի շրջանակներում 2015թ. նոյեմբերի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների տան հյուրընկալ դահլիճում իրականացավ «Փանոս Թերլեմեզյանի սիրելի կոմպոզիտորները» խորագրով համերգը, որին մասնակցեցին գիտական աշխատանքով զբաղվող

¹³⁴ Տե՛ս **Ասափրյան Ա.**, Համերգ «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը», Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին (նստաշրջանի նյութեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 17, 18:

երիտասարդ երգիչներ, դաշնակահարներ և կոմպոզիտորներ¹³⁵: Համերգը վարեց և ներածական խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ Աննա Ասատրյանը:

Խորհրդի գործունեության մեջ անուրանալի և մեծ է Արվեստի ինստիտուտի տնօրինության՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի և տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի աջակցությունը և օգնությունը, ովքեր մշտապես սատարել են խորհրդի զարգացման գործընթացին: Անգնահատելի է Ա.Աղասյանի ավանդը երիտասարդ մասնագետների պատրաստման, արվեստագիտության բնագավառում նրանց կայանալու, զարգանալու տեսանկյունից, ինչպես նաև ճիշտ խորհուրդներով սատարելու և գոտեպնդելու առումով: Ծանրակշիռ է նրա աշխատանքը երիտասարդ կադրերի պատրաստման գործում¹³⁶: Միևնույն ժամանակ կարևորում ենք ինստիտուտի ավագ սերնդի գիտնականների օժանդակությունը՝ երիտասարդ արվեստաբանների գիտական մտքի առաջընթացին սատարող իրենց արժեքավոր խորհուրդներով¹³⁷:

